


ՆՐԱՆՔ

Մշակութային և Հասարակական
Երկշաբաթաբեր
Յոյն
1200 թուման
Հայաստանում 320 դրամ



ՁԱՆՏՈՎ



ԵՆ ԳՐԵԼ



■ ■ ■



ՕԳՈՍՏՈՍ 13՝ ԳԱՆԻԼԻԿՆԵՐԻ ՄԻՋԱԳՉԱՅԻՆ ՕՐ

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

- 2 **Համայնք**
- 3 **Թումանյանի Միակ Օրինակ Գիրքը**
- 4 **Վճռական պահի հայ ժողովրդի պատմության մեջ**
Ժիրայր Լիպարիտեան
- 6 **Նորլեզիացի ահաբեկչի տեսակետները, նաև հայաստանի եւ հայերի մասին**
- 10 **Վիճարարոյց հարցեր**
Ե. Զուղայի հայոց թեմի պատմութիւնից
Հրաչ Միրզախանեան
- 18 **Մեյամադձոտ պատմության պատմիչը՝**
Քազուօ Իշիգուրօ
Շանթ Բաղրամեան
- 20 **Սոցցանցերը եւ բլոգները Հայաստանի առաջիկայ ընտրութիւններում**
Գայիանէ Մկրտչեան
- 21 **Սթրեստը հաշմանդամության պատճառ**
- 23 **Ինչու տեսանկիւնը կարեւոր է**
- 25 **Մարզանք**
- 27 **Ժամանց**

Մշակութային եւ Հասարակական
Յոյս
 Երկշաբաթաթերթ
 Ե սարի, քիւ104, Օգոստոս 10, 2011,
 1200 քուման
 Հայաստանում 320 դրամ



7 Ինչ է ձայնակցությունը

Պ ա ր ս կ ե ր է ն ք ա ժ ի ն

2	Այս համարի հայերեն էջերում	7	Յոյա Փիրզադի «Մէկ օր մնացած Չատուան» վէպի մասին Ռոբերթ Սաֆարեան	10	Գաֆեսեանի արևեստի համալիրը կասկադում
4	Ժիրայր Լիպարիտեան՝ Հայաստանի եւ Թուրքիայի սահմանները երբեւէ բաց չեն եղել Գէորգ Ստամբուլցեան	8	Հայկական հեքիաթներ եւ պատմաձցներ պարսկերէնով Անդրանիկ Խեչումեանի թարգմանութեամբ	11	Փանոսեանները՝ երաժիշտների ընտանիք Յովիկ Մինասեան
6	Բաբլի հայերի մշակութային կեանքը			12	Մարամ Ելենայի աշակերտն է եղել Լիա Խաչիկեան

<p>Յոյս Հասարակական-մշակութային երկշաբաթաթերթ</p> <p>Արտօճատը՝ Լեւոն Ահարոնեան</p> <p>Խմբագիր՝ Ռոբերթ Սաֆարեան</p>	<p>Խմբագրական կազմ՝ Քարմեն Ազարեան, Լիա Խաչիկեան, Գարուն Սարգսեան, Արմինէ Մելիք-Իսրայելեան</p> <p>Գեղարվեստական ձեւաւորում՝ Լիա Խաչիկեան</p>	<p>Հայերեն բաժնի սրբագրիչ՝ Քարմեն Ազարեան</p> <p>Կայք Քաջիկ Սաֆարեան</p> <p>Մարզական Արման Ստեփանեան</p> <p>Բաժանորդագրութիւն Քարին Եաղուբի</p>	<p>Հասցէ՝ Թեհրան, Էնդելար պողոտայ, Վալի Ասր քառուղի համար 1048 66495180 66492693</p> <p>Հեռախօս-հեռապատճեն՝ 66495208</p> <p>hooyes@inbox.com www.hooyes.com</p>
--	---	--	--

Ս. ԱՄԵՆԱԹՐԿԻՉ ՎԱՆՔԻ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐԻ ԱՆՇԵՏԱՉՄԱՆ ՇԵՏՔԵՐՈՎ ՍԱՌՉԱԼԵՌԱՆ ԾԱՅՐԸ

Սպահանի Չայոց թեմի երկրորդ 14 Յուլիս թակիր յայտարարութիւնից յետոյ, Ոչ մի լուր Ս. Ամենափրկիչ վանքի թանգարանի անյայտացած մանրանկարների մասին: Ենթադրուում է, որ ինչպէս խոստացել են թեմի յայտարարութիւնները, հետաքննութիւնները շարունակուում են եւ շուտով կը բացայայտի յանցաւոր(ներ)ի անուն(ներ)ը, եւ ինչպէս խոստացել են հաղորդագրութիւններում նկարչութիւնները կը վերադարձեն թանգարան: Սակայն այս խնդրի շուրջ ծաւալած զոյցներում երեւան է գալիս մի աւելի ընդհանուր, աւելի մտահոգիչ հարց: Պատասխանատուները դժարանում են հաստատել, թէ խնդրոյ առարկայ նկարչութիւնները բոլորը իրօք անհետացել են թէ ոչ: Հիմա հարցն այս է. արդեօ՞ք այս գործերը միակ անհետացած գործերն են: Ընդհանրապէս ի՞նչ կարգով է պահպանուում վանքի թանգարանում հաւաք-

ւած հարստութիւնը, հարստութիւն, որ բարձր մշակութային ու բարոյական արժէքի հետ միատեղ, ունի բարձր նիւթական արժէք: Այդ իրերը անհետանալու դէպքում, ե՞րբ եւ ինչպէ՞ս է պարզելու հանգամանքը: Ն. Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի պատասխանատուները կարող են հարցազոյցներ կազմակերպել իրանահայ լրատւամիջոցների հետ, այս հարցերը լուսաբանել հանրութեան համար եւ այսպիսով կանխել գուշակութիւններն ու կասկածանքները: Այսօր մտահոգութիւնն այս է, որ Լոնդոնում աճուրդի հանած նկարները միայն սառցալեռան ծայրը կը լինեն եւ խնդիրը իրականում աւելի խորն ու ծաւալուն լինի քան առաջին հայեացքից երեւում է: Հարցի մասին լռելով հնարաւոր չի կասկածները փարատել, պէտք է լուսաբանել, պատասխանել հարցերին:

«ՀԱՄԱՅՆՔ»՝ ՆՈՐ ԻՐԱՆԱՆԱՅ ԿԱՅՔ



Նորերս իր աշխատանքն է սկսել իրանահայ մի նոր կայք ՀԱՄԱՅՆՔ անունով: Հրատարակողները կայքի «Մեր մասին» բաժնում իրենց ներկայացրել են հետեւեալ ձեւով.

«Մենք՝ մի խումբ ոչ կուսակցական իրանահայ ազգային, հասարակական, գրական, լրատւական եւ մշակութային գործիչներ ենք: Ունենք համախոհներ ու գործընկերներ: Բոլորս էլ ժամանակին անդամակցել կամ անդամակցում ու սիրողաբար աշխատում ենք հայկական տարբեր միաւորներում ու ազգային հաստատութիւններում:

Դրանով հանդերձ, որ չունենք կուսակցական պատկանելիութիւն, սակայն ունենք քաղաքական հայեացքներ ու դիրքորոշումներ:

Մեր խօսքը, մտքերը եւ մօտեցումները տարածելու եւ այն հասարակութեան քննարկմանը ներկայացնելու նպատակով, այլոց կարծիքները լսելու եւ նրանց տեսակետներին ծանօթանալու համար, հիմնում ենք «ՀԱՄԱՅՆՔ» կայքէջը: Կայքէջի նպատակներից է՝ արտացոլել իրանահայ համայնքին եւ ընդհանրապէս հայկական աշխարհին յուզող խնդիրներ: Հանդուած ենք, որ հնարաւոր է կողք-կողքի երկխօսութեամբ եւ հանդուրժողական ոգով ստեղծել ժողովրդավարական մթնոլորտ, որը կը նպաստի հարցերի խորափնտրմանը, հնարաւոր ելքերի փնտրմանն ու լուծումների առաջադրմանը»:

ՀԱՄԱՅՆՔ-ի հասցէն հետե-

ւեալն է. www.hamaynk.com: Կայքն ունի նաեւ պարսկերէն բաժին:

Վերջին տարիներին իրանահայ կայքերի հրապարակ գալով, բաւականին աշխոյժ լրատւական մթնոլորտ է ստեղծել մեր համայնքում: «Իրանահայեր» կայքը իր աշխատանքն սկսեց սրանից աւելի քան երեք տարի առաջ, դեռ մի տարի չի անցել «Հայելի»-ի հրատարակումից, եւ ահա «Համայնք»-ը: Դժբախտաբար, «Համայնք»-ի հրատարակողները չեն բացայայտել իրենց ինքնութիւնը. դրանով հանդերձ, ողջունում ենք նոր կայքի հրատարակութիւնը եւ յոյս ունենք, որ այն կը յաջողի իր առջեւ դրած նպատակներն իրագործել:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ՄԻԱԿ ՕՐԻՆԱԿ ԳԻՐՔԸ

Թերթիս համար 100-ում հրատարակված՝ Նիկիտ Միքոպայեանցի գրչին պատկանող «Յովհաննէս Թումանեանի առաջին գրքի հրատարակիչը» յօդուածի բնագրի վերջում, եղել են նաեւ մի շարք համարակալված ծանօթագրութիւններ, որոնք չեն տպագրուել: Դրա պատճառն այն էր, որ համապատասխան համարակալում գոյութիւն չունէր բուն յօդուածի տեքստում: Յամենայն դէպս, պարունակած տեղեկութիւնների կարելորութեան պատճառով, հեղինակի ցանկութեամբ ստորեւ տպագրում ենք դրանք:

1. 1901 թւականի Ապրիլի 8-ին օժտել է Գանձակի նահանգի Ղազախ գաւառի կենտրոն՝ Ղազախ քաղաքի նորակառոյց հայոց եկեղեցին: Եկեղեցին սկսել է կառուցել Բա-

նանց գիւղից այդտեղ վերաբնակւած Մակի Ջաղէթեանը, աւարտել է իր որդին Ալեքսանդր Ջաղէթեանը: Օժտել է Գանձակի փոխանորդ Անանիա եպիսկոպոսը:

«Մշակ» /Թիֆլիս/ 1901 համար 87


2. 1914 թ. Ապրիլի 20-ին նշել է Ղազախի գաւառի Շամշադին շրջանի Թովուզ (այժմ՝ Տաւուշի մարզի Տաւուշ) գիւղի ծխական երկսեռ դպրոցի 25-ամեակը: Նւիրատուներից է եղել Ալեքսանդր Ջաղէթեանը:

Արշալոյս Գիւրջինեան, Տաւուշ /Թովուզ/, Երեւան. 2010, էջ162

3. Ալեքսանդր Ջաղէթեան /ծն. 1.11.1857 Գանձակ, վխճ. 20.8.1916, Թիֆլիս/ զբաղւել է փայտամշակմամբ եւ ճարտարա-



պետութեամբ, կողակիցը եղել է Նատալիա Տէր Սկրտչեանը եւ ունեցել է տասն զաւակ. Ըստ տարիքի՝ Գրիգոր /Գրիշա/, Սաթենիկ, Ներսէս, Մարիամ /Մաշա/, Մկրտիչ /Նիկիտա/, Աննա, Աղեքսանդր /Մաշա/, Արուսեակ, Վարդան, Նատալիա:



«Յոյս» երկշաբաթաբերթի արտօնատէր Յարգելի Պրմ. Լեւոն Ահարոնեան

Համար 100 «Յոյս» թերթում, ձեզ հետ ունեցած հարցազրոյցում, ձեր պատասխանները բոլոր հարցերին, լաւագոյն տպաւորութիւնը թողեց իմ վրայ, որը ճշգրիտ կերպով հետեւում են հասարակական եւ մշակութային ասպարեզներում պատահած անց ու դարձին, որը ցանկալի է բոլոր ընթերցողների համար: Յուսով եմ, ինչպէս որ արտայայտւել էք, շարունակէք, ձեր սիրած աշխատանքը, որը գոհ կը թողնէք, «Յոյս»-ի ընթերցողներին: Մաղթում եմ ձեզ, նորանոր յաջողութիւններ. Ձեր Դրական աշխատանքը հասարակական ասպարեզներում Ձեզ միշտ յարգող Ա. Ներսիսեան 21.5.2011



Հայաստանեան մամուլում հրատարակել է Հայաստանի առաջին նախագահի խորհրդական եւ արտգործնախարարի տեղակալ՝ Ժիրայր Լիպարիտեանի ծաւալուն հրապարակախօսութիւնը Հայաստանի ներկայ վիճակի, յատկապէս արտագաղթի աղէտալի հետեւանքների մասին: Լիպարիտեանը այժմ ապրում է ԱՄՆ-ում եւ դասաւանդում Միջիգան համալսարանում: Ստորեւ ներկայացնում ենք հատուածներ այդ հրապարակախօսութիւնից:

ՎՃՌԱԿԱՆ ԴԱՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԴԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Ժիրայր Լիպարիտեան

....
Ժամանակն է հասկանալու, ինչպէս շատերն են հասկանում Հայաստանում, որ արտագաղթի ներկայ ծաւալները մեզ հասցրել են պատմական կարելութիւն ներկայացնող աղէտի շեմին. աղէտ, որ անհամեմատ աւելի մեծ է, քան սովորաբար յիշատակուող դժարին խնդիրները:

Մենք հպարտանում ենք պատմութեան մեր իմացութեամբ եւ միաժամանակ կատարեալ տգիտութիւն ցուցաբերում այն հարցում, թէ այդ պատմութիւնն ինչ կարող է նշանակել, ինչ դասեր կարող է մեզ տալ, եթէ, անշուշտ, ցանկանում ենք որել է դաս առնել: Մեր քաղաքական, մտաւորական, գիտնական ու կրօնական այրերից շատ-շատերն իրենց ելոյթները, յօդածները, գրքերն ու քարոզները զարդարում են այդ պատմութեան մէջ լեցուն ողբերգութիւնների յղումներով: Նաեւ շեշտում են այդ պատմութիւնից դասեր քաղելու անհրաժեշտութիւնը: Եւ սակայն կարծես մոռացութեան են մատնում այն պարզ փաստը, որ Հայաստանը դատարկուում է, եւ որ ծանր ու դաժան այդ հանգամանքն ունի իր անդառնալի հետեւանքները:

....
Ցեղասպանութիւնն ու Ցեղասպանութեան ճանաչման քանքերը, զանազան ծաւալներով, համակել են սփիւռքի ու Հայաստանի քաղաքականութիւնն ու քաղաքական

միտքը: Այդ աղէտին յարմարելու համար տասնամեակներ են անհրաժեշտ եղել, եւ սակայն չենք կարող ասել, թէ տիրապետում ենք իրադրութեանը: Մենք պէտք է իրադարձութիւնները նախեւառաջ ինքներս մեզ պատմէինք, ապա յետոյ՝ աշխարհին: Ոմանք սկսել են ուսումնասիրել Օսմանեան թուրքիայի կառավարութեան վարած քաղաքականութեան պատճառները: Միեւնոյն ժամանակ մենք որոշել ենք, որ Ցեղասպանութեան միջազգային ճանաչումն է այն բնագաւառը, ուր պէտք է կենտրոնացնենք մեր ուժերը: Ակնկալել ենք, որ ուրիշ ժողովուրդներ օժանդակեն ճանաչման մեր արշաւը, քանի որ նրանք եւ մնացած աշխարհը դասեր կը քաղեն հայոց Ցեղասպանութիւնից, պատմութիւնից, մեր պատմութիւնից: Եւ սակայն զլացել ենք նոյնքան կարելու մի հարց տալ: Երբ որոշեցին, որ ցանկանում են սպանել մի ժողովուրդ, ինչո՞ւ Օսմանեան կայսրութեան այդ շրջանի ղեկավարները կարծեցին, թէ կարող են նման մասշտաբներով իրականացնել այն տեղահանութիւններն ու կոտորածները, որոնք անհրաժեշտ էին իրենց նպատակին հասնելու համար: Ինչո՞ւ մտածեցին, թէ կարող են նման չափերով հասնել նրան, ինչին այժմ Ցեղասպանութիւն ենք կոչում: Տեխնիկապէս դրա իրագործումն ինչո՞ւ էր հնարաւոր առհասարակ:

Պարզ ճշմարտութիւնն այն է, որ հայերն իրենց իսկ երկրում վերած-

ւել էին փոքրամասնութեան, եւ նրանց թիւն իջել ու հասել էր այնպիսի մի շեմի, որ իրենց ձեռքերով իրենց խնդիրների որել է լուծում անհնարին էր դարձել: Հազար տարի առաջ հայերը կազմում էին պատմական Հայաստանի բնակչութեան առնագն 90 տոկոսը՝ տարբեր հաշարկներով կազմելով մէկից մինչեւ չորս միլիոն: 1914 թ., ըստ մեր պատրիարքարանի տւեալների, ամբողջ Օսմանեան կայսրութիւնում 2.2 միլիոն հայ կար: Մինչ այդ տեղի ունեցած կոտորածներով կարելի է բացատրել բնական աճի բացակայութեան փոքր մասը միայն: Անհատների, ընտանիքների ու խմբերի արտագաղթը, չնայած դրա աներկբայօրէն ծանրակշիռ պատճառներին, ինչպէս նաեւ ազգափոխութիւնդաւանափոխութիւնը, կազմում են մնացած հիմնական պատճառները:

Բնակչութեան այդ հիւծումն ու նւազումն են, որ երիտթուրքերի կառավարութեան համար Ցեղասպանութիւնը դարձրին Հայկական հարցի լուծման հնարաւոր միջոց, եւ, նման քաղաքականութիւն ընդունելուց յետոյ՝ դրանց պատճառով էր, որ կարողացան յաջողութեամբ իրագործել այն: Եւ դա՛ չնայած մինչեւ պատերազմը ֆիդայիների կողմից եւ բուն Ցեղասպանութեան ընթացքում հայկական դիմադրութեան կենտրոններից շատերում ցուցաբերած հերոսական պայքարին: Վերջնական արդիւնքը չի պայմանաւորում ճառերով ու գաղափա-

րախօսութիւններով, եւ ոչ էլ նոյնիսկ հերոսութիւններով ու խիզախութեամբ: Մեր շուրջ ծաւալող օքիեկտիւ իրականութիւնն է, ժամանակի ընթացքում կազմաւորող իրողութիւններն են, որ պէտք է հաշի առնենք:

....

Հայաստանը ոչ առաջին, ոչ էլ վերջին երկիրն է, որի առջեւ նման խնդիրներ են ծառայած, դրանց թուում եւ արտագաղթի խնդիրը: Սակայն տարբերութիւնն այն է, որ մինչ ուրիշները կարող են իրենց թոյլ տալ ուշացնել լուծումները եւ տեսական կորուստներ կրել, հայերն ու Հայաստանն ի վիճակի չեն իրենց նման շռայլութիւն թոյլ տալու:

Ժամանակն է, որ սփիւռքի ղեկավարներն ու մենք՝ մնացածներս, վերագնահատենք մեր ռազմավարութիւններն այն հարցում, թէ ինչ եւ ինչպէս անել Հայաստանում: Գիտեմ, որ բազմաթիւ կազմակերպութիւններ նւիրած են Հայաստանում ու Ղարաբաղում կեանքի պայմանների բարելաման գործին: Եւ սակայն սփիւռքի ողջ օգնութիւնն ի օգուտ չի եղել հակադրելու Հայաստանում իրականացող այն քաղաքականութեանն ու գործընթացներին, որոնք քաղաքացիներին խրախուսում են լքելու երկիրը:

Ժամանակն է, որ սփիւռքահայերից նրանք, ում Հայաստանի իշխանութիւնները նախագահից մինչեւ նախարարներ ու դատաւորներ ականջ են դնում, պաշտպանեն յարգած արժանապատւութեամբ քաղաքացիներով Հայաստանը պահպանելու դատը:

Ժամանակն է յատկապէս, որ նրանք, ովքեր սփիւռքում ու Հայաստանում Ցեղասպանութեան ճանաչումն ամենաառաջնահերթ հարցի են վերածել, որոշեն, թէ արդեօ՞ք այս պահին անելի կարելոր է այն, որ ԱՄՆ կամ որեւէ այլ երկրի նախագահ գործածի Ցեղասպանութիւն տերմինը, թէ՞ այն, որ Հայաստանում մի գիւղ բաւարար ենթակառուցածք ձեռք բերի, որպէսզի գիւղացի-

ները կարողանան կանգուն տնտեսութիւն ստեղծել, ինչը նրանց համար իրենց սեփական երկրում մնալն անելի տանելի կը դարձնի, քան Սիբիր արտագաղթելը:

Խնդիրն ահա այս աստիճան պարզ է:

....

Ի՞նչ պատճառով է, որ չենք ուզում գիտակցել, որ 1860-ականներից մինչեւ 1914 թ. Արեւմտահայաստանի հայաթափման հիմնական գործօններից է եղել այդ տարածաշրջանի սոցիալ-տնտեսական պայմանների առեւտրի վատթարացումը: Լաւ կը լինի մեր անհրաժեշտ կուսակցութիւններն ուսումնասիրեն իրենց իսկ ծննդեան պայմանները: Թէ՛ Հայաստանում՝ Խորհրդային ու անկախ, եւ թէ՛ սփիւռքում պատմաբաններն այդ աշխատանքն արել են: Եզրակացութիւններն են բացակայ:

Այստեղ բարձրացած հարցերը վերաբերում են ոչ միայն այն առաջնայնութիւններին ու անհրաժեշտութիւններին, որոնք, իմաստուն լինելու դէպքում, պէտք է վերանայենք, այլ նաեւ մեր առկայ առաջնայնութիւնների միջեւ եղած յարաբերակցութեանը, մեր հարեւանների հետ հակամարտութիւնները լուծելու մեր կարողութեանը եւ, վերջապէս, Ցեղասպանութիւնը հէնց Թուրքիայի պետութեանը ճանաչել տալուն ուղղած քաղաքականութեանը: Այս հարցերը հազաւո՞ր ենք բարձրացնում, մեր վարած քաղաքականութեանը դժուարութեամբ ենք քննադատաբար մօտենում. դրանց վերաբերում ենք իբրեւ ի վերուստ տրած փաստի:

Սա կոչ է՝ ուղղած Հայաստանի ղեկավարներին եւ սփիւռքի կազմակերպութիւններին ու կուսակցութիւններին, որ վերանայեն իրենց առաջնայնութիւններն ու ռազմավարութիւնը՝ նկատի ունենալով Հայաստանի ու Ղարաբաղի մարդաթափման տեսանելի վտանգի վերջ կատարած վերլուծութիւնը: Սա նաեւ իմ գործընկերներին՝ մտաւորականութեանն ու գիտաշխատողներին

ուղղած հրաւեր է, որ իրենց անհղբ բերեն այս քննարկման մէջ եւ բարձրացնեն հանրային բանավեճի մակարդակը:

....

Կային մարդիկ, ովքեր կարծում էին, թէ հնարաւոր էր Հայաստանում կայուն զարգացում հաստատել ու ապահովել, որովհետեւ հաւատում էին, որ Հայաստանն ուրիշ էր, որ այն կարող էր յաղթահարել շրջափակումներն ու մեկուսացումը՝ այն յոյսով, թէ տնտեսական կայուն զարգացման համար հարկ եղած միջոցները սփիւռքը կը ներդնէր: Նրանք պնդում էին, որ սփիւռքին բաւարարելու համար ընդամենը հարկաւոր էր, որ Հայաստանի կառավարութիւնը որդեգրէր Ցեղասպանութեան ճանաչման քաղաքականութիւնը, որը յատուկ կարեւորութիւն ունի սփիւռքի համար: Եւ պատահեց այնպէս, որ 1998 թ. առաջին նախագահն ստիպւած եղաւ հրաժարական տալու: Եկան նոր նախագահ ու նոր վարչախումբ: Նրանք 10 տարի ունեին իրենց վարկածը գործարկելու համար: Իսկ այժմ մենք երկրորդ նախագահի կողմից տեղաւորած երրորդ նախագահի պաշտօնավարութեան երրորդ տարում ենք: Պարզ չէ՞ միթէ, որ հեռանկարային իմաստով շատ անելի վատ վիճակում ենք այսօր, քան վերջին քսան տարւայ ընթացքում երբեւիցէ:

Շատ դժուար է վերջին երկու վարչախմբերի մէջ պետականութեան մարտահրաւերի առնչութեամբ դրական որեւէ նոր որակ գտնելը:

Եթէ երրորդ նախագահն այլ վերլուծութիւն ունի, մենք այն չենք տեսել, թէեւ նա որոշ անսովոր քայլեր կատարել է: Սակայն այսօր ոչ թէ որոշ քայլեր են անհրաժեշտ, այլ մի ամբողջ ռազմավարութիւն, որն ընդունում է Հայաստանի պետականութեան եւ Ղարաբաղի առջեւ ծառայած հիմնախնդրի ծաւալն ու խորութիւնը:...

Յուլիսի 31, 2011 թ.
Անն Արբոր, Միչիգան

ՕՍԼՈՅԻ ԱՀԱՐԵԿԻՉ՝ ԲՐԵՅԻԿԻ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ ՆԱԵՒ ՀԱՅԵՐԻ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Յուլիսի 22-ին, աշխարհի ամենախաղաղ երկրներից մեկը համարուող Նորվեգիան ցնցեց այնպիսի ահաբեկչական յարձակումից, որն ամենաարհմալին էր երկրում՝ Երկրորդ համաշխարհային պատերազմից ի վեր: Երկրի մայրաքաղաք Օսլոյի կենտրոնում գտնուող կառավարական մի շենքի պայթիւն խլեց 7 զոհ, իսկ քաղաքի մօտակայ գրասրահայրում մի աշակերտական բանակումի վրայ յարձակման հետեւանքով սպանւեցին շուրջ 70 երեխաներ: Լրատամիջոցներն սկսեցին մեղադրել իսլամական ծայրայեղականներին, սակայն շուտով պարզւեց, որ ահաբեկչութիւնը ծրագրել է գործադրել է քրիստոնեայ ֆունդամենտալիստ ... Բրեյլիկը, եւ սպանւած երեխաների մեծամասնութիւնը Նորվեգիայում ապրող գաղթականների երեխաներ են եղել: Բրեյլիկը աշխարհը եւ պատմութիւնը դիտում է որպէս շարունակական խաչակրաց արշաւանք եւ իր առաքելութիւնն է համարում ազատագրել Եւրոպան մահմեդականների գերիշխանութիւնից: Այսպէս է ասւած նրա 1500 էջանոց մանիֆեստում:

Այդ մանիֆեստում Բրեյլիկը գրել է տարիներ շարունակ, որտեղ էլ հենց արձանագրել է իր ծայրայեղական գաղափարները, զէնք-զինամթերք ձեռք բերելու, ռումբ պատրաստելու մանրամասներն ու անձնական ապրումները:

Ընդ որում, օրագրից դատելով, Բրեյլիկը այնքան տարւած է եղել իր գաղափարներով ու ծրագրերով, որ անտեսել է այդ ահաբեկչութիւնների արդիւնքում հնա-



րաւոր աւերածութիւններն ու կորուստները:

Անձնական կեանքի մասին յուշերում Բրեյլիկը պատմել է մահմեդական ներգաղթեալների հետ ունեցած իր շփումների, նրանցից ստացած վիրաւորանքների մասին, թէւ յիշատակել է նաեւ, որ նրանց շրջանում ունեցել է նաեւ ընկերներ: Որոշել է համալսարան չընդունել, զբաղել է ինքնակրթութեամբ, տեւական ժամանակ ճանապարհորդել է, եղել է Եւրոպական երկրներում, Փղոսկրի Ափում, Թուրքիայում ու Միացեալ Նահանգներում:

Բրեյլիկը օրագրում պնդում է, թէ պատկանում է մի քանի հարիւր մարդուց բաղկացած Եւրոպական ազգայնականների «Խաչակիրների խմբին», որի անդամները մինչեւ 2083 թւականի Սեպտեմբերի 11-ը պէտք է ազատագրեն Եւրոպան:

Նշենք, որ օրը պատահական չէ. 1683 թւականին Սեպտեմբեր 11-ին՝ Վիեննայի ճակատամարտում, Եւրոպան յաղթանակեց ու վերջ տւեց Օսմանեան կայսրութեան առաջխաղացմանը, եւ ահա, սրանից ուղիղ 400 տարի անց, ըստ Բրեյլիկի, երկրագնդի ամենահին մայրցամաքը կրկին պիտի տօնի իր յաղթանակը:

«Մենք պայքարում ենք յանուն բնիկ Եւրոպացիների՝ պահպանելու համար մեր մշակոյթը, մեր

ինքնութիւնը, մեր պետութիւնն ու քրիստոնէութիւնը», - գրել է Բրեյլիկը՝ պնդելով, որ մահմեդականների հետ «երկխօսելու ժամանակն արդէն սպառւել է»:

Մանիֆեստում Բրեյլիկը ներկայացրել է նաեւ իր երկարաժամկետ ու կարճաժամկետ նպատակները՝ Եւրոպայից ամենավերջին մահմեդա-

կանի արտաքսումից մինչեւ Կոնստանդնուպոլսի ազատագրումը, Մեծ Զայաստանի, Յունաստանի ու Սերբիայի վերականգնումը: Ըստ Բրեյլիկի, Բոսնիան ու Ալբանիան պէտք է քարտեզից դուրս թողնւեն, թուրքերը բնակւեն միայն Կենտրոնական Անատոլիայում եւ պատասխան տան հայերի ցեղասպանութեան համար:

Չայերի, նրանց բնաջնջման ու Մեծ Զայքի վերականգման հարցը բաւական յաճախ է հանդիպում Բրեյլիկի օրագրում, մանրագին ներկայացւած են ոչ միայն Պարսկաստանի, Օսմանեան կայսրութեան տիրապետութեան տակ հայերի կրած տառապանքները, այլեւ դարաբաղեան պատերազմն ու դրա հետեւանքները:

«Խաչակրաց արշաւանք՝ Ալ-Ղաիդայի մեթոդներով», - փաստել է իտալական «Կորիերա դէ լա սերա» պարբերականը՝ ընդգծելով, որ մանիֆեստում բազմաթիւ ընդհանրութիւններ կան մահմեդական ծայրայեղական խմբաւորումների գաղափարախօսութիւնների հետ:

Արեւմտեան գերտէրութիւնները, ինչպէս նաեւ Զայաստանը խստօրէն դատապարտել են Նորվեգիայում տեղի ունեցած ահաբեկչութիւնները:

Օգոստոսի 13-ը ձախլիկների համաշխարհային օրն է: Այդ օրը անանակոչ-
 ւել է այդպես, աշխարհին յիշեցնելու համար, որ ձախտվ գրելը կամ աշխա-
 տելը, ինչպես մի ժամանակ ընկալում էր, հիւանդութիւն կամ սատանայա-
 կան շեղում չի բնականից, այլ պարզապէս բիոլոգիկ իւրայատկութիւն որոշ
 մարդկանց մօտ: Նաեւ բոլորին յուշելու, որ տների կահաւորման, կիրառա-
 կան իրերի արտադրութեան եւ բոլոր պարագաներում, չնոռանան, որ աշ-
 խարհի բնակչութեան կարեւոր մասը իրենց կենսական աշխատանքները
 կատարում են ձախ ձեռքով եւ պիտի նկատի առնել նրանց կարիքները: Հե-
 տեւեալ լօղւածը բացատրում է թէ ինչ է ձախլիկութիւնը եւ ինչպէս պիտի
 վարւել ձախլիկ երեխաների հետ:


ԻՆՉ Է ՁԱԽԼԻԿՈՒԹԻՒՆԸ

Ձախլիկութիւնը համար-
 ւում է ուղեղի կառուցւածքա-
 յին առանձնայատկութեան
 դրսեւորում: Մարդու ուղեղի 2
 կիսագնդերը ոչ թէ մէկը միւսի
 հայելային արտացոլումն են,
 այլ լրացնում են միմեանց:
 Ընդ որում՝ դրանցից մէկը դո-
 մինանտ է: Աջ կամ ձախ
 ձեռքի առաջատարութիւնը ո-
 րոշուում է ոչ թէ երեխայի կամ-
 քով ու ցանկութեամբ, այլ գլ-
 խուղեղի աջ եւ ձախ կիսագն-
 դերի գործառոյթների յատուկ
 բաշխմամբ: Հիմնականում
 այն ժառանգական ծագում
 ունի եւ նանկավարժի ու ծնո-
 ղի համար պէտք է դիտուի ոչ թէ
 որպէս արատ, այլ անհատա-
 կան առանձնայատկութիւն:

Ըստ այս կամ այն կիսագն-
 դի գերակայութեան՝ կարելի է
 առանձնացնել 3 տիպի մարդ-
 կանց.

1. աջլիկներ (մարդիկ, որոնց
 մօտ, որպէս կանոն, գերակայում է
 ձախ կիսագունդը)

2. ձ ա խ լ ի կ ն եր
 (մարդիկ, որոնց
 մօտ, որպէս կա-
 նոն, գերակա-
 յում է աջ կիսա-
 գունդը)



3. մարդիկ, որոնց մօտ որեւէ ձեռքի նախընտրութիւն արտայայտած չէ. Նրանք կարող են օգտուել աջ եւ ձախ ձեռքերից՝ հաւասարապէս:

Ձախլիկների մօտ գերակշռում են զգացմունքային անհաւասարակշռութիւնը, ցասումը, վախը, տրամադրութեան կտրուկ անկումը, խղճահարութիւնը, դիւրագագցութիւնը, զգացմունքայնութիւնը, անհանգստութեան կամ տագնապի նշանները: Նրանց խօսքը յուզականօրէն յագեցած է, արտայայտիչ, հնչերանգով եւ շարժումներով հարուստ: Երբեմն առկայ են կտրուածութիւն, անլորդ բառեր եւ ձայներ: Նրանց յատուկ են խօսքի յապաղումները: Դժարութիւններ են ունենում գրելիս եւ կարդալիս: Նրանք անմիջական են, կամակոր, լացկան, հաստատուն են իրենց ցանկութիւնների իրականացման հարցում:

Ի տարբերութիւն աշխիկների՝ ձախլիկները յաճախ չեն ունենում հաստատուն առաջընթաց: Ձախլիկներին հեշտութեամբ չի տրուում անցումը մի գործընթացից միւսին: Յատկապէս դժարանում են արագ գործողութիւններ կատարել երկու ձեռքով միաժամանակ (պարային շարժում, մարմնամարզութիւն):

Առաջներում մանկավարժների մի ողջ բանակ մեծ ոգեւորութեամբ եւ ջանասիրաբար փոքրիկ ձախլիկներին սովորեցնում էր նկարել եւ գրել աջ ձեռքով: Չարգացած երկրներում, օրինակ՝ ԱՄՆ-ում, Անգլիայում, Ֆրանսիայում, վաղուց հրաժարել են ձախլիկներին վերափոխելու միտումներից: Վերափոխելով երեխայի առաջատար ձեռքը՝ մենք անխուսափելիօրէն ուղեղի գործունէութեան վերակառուցում ենք սկսում: Մանկավարժները պէտք է գիտակցեն, որ ձախլիկներին վերափոխելը կարող է ազդել երեխայի զարգացման բնականոն

ՉԱԽԼԻԿ ՏՂԱՄԱՐԴԻԿ ԱԻԵԼԻ ԸՆԾ ԵՆ ՎԱՍՏԱԿՈՒՄ

Միջնակարգ կրթութիւն ունեցող ձախլիկ տղամարդիկ 15 տոկոսով անելի շատ են վաստակում, քան աշխիկները: Նման եզրակացութեան են եկել ԱՄՆ-ի տնտեսական հետազօտութիւնների ազգային բիւրոյի մասնագէտները:


Բարձրագոյն կրթութիւն ունեցողների շրջանում տարբերութիւնը անելի մեծ է՝ դիպում ստացած ձախլիկները 26 տոկոսով անելի են վաստակում, քան

դիպումաւոր աշխիկները:

«Ռոյթերգ»-ի վկայութեամբ՝ գիտնականները որեւէ կերպ չեն կարողանում բացատրել այս երեւոյթը:

Կանանց վրայ այս օրինաչափութիւնը չի տարածուում՝ ձախլիկ կանայք աշխիկներից անելի չեն վաստակում:

Կիրակի օրը՝ Օգոստոսի 13-ին աշխարհում նշուում է Ձախլիկների միջազգային օրը:



գործընթացի վրայ: Կարող է նաեւ բացասաբար ազդել երեխայի իմացական կարողութիւնների վրայ:

Ապացուցւած է, որ ձախլիկներին հարկադրաբար աշխիկ դարձնելու դէպքում տուժում է ուղեղի աջ կիսագունդը, որը պատասխանատու է զգայարանների համար: Այդ պատճառով կարող են ի յայտ գալ բազմաթիւ բացասական երեւոյթներ, ինչպիսիք են, օրինակ, հոգեկան անկայունութիւնը, ֆիզիկական զարգացման թուլացումը, անփութութիւնը, դանդաղ-

կտութիւնը, անհանգստութիւնը, կակազութիւնը, ախորժակի բացակայութիւնը, քնի խանգարումը, գլխացաւերը, հոտառութեան սրումը, տրամադրութեան կտրուկ փոփոխութիւնները եւ այլն:

Կեանքի տարբեր բնագաւառներում ձախլիկների յարմարեցումը սովորաբար անելի դժար է ընթանում: Բանն այն է, որ նրանք ապրում են աշխիկների համար նախատեսուած աշխարհում, որտեղ գրեթէ ամէն ինչ յարմարեցւած է աշխիկների գործունէութեանը՝ սկսած այնպիսի պարզագոյն



գործիքներից, ինչպիսիք են մկրատը, արդուկը եւ այլն: Սակայն արդէն տարբեր երկրներում ստեղծել են ընկերություններ, որոնք զբաղւում են յատուկ ձախիկների համար նախատեսւած իրերի եւ սարքերի արտադրութեամբ:

Ձախիկների անյարմարողականութիւնը դարոցին առաւել նկատելի է տարրական դասարաններում: Մեծ մասի համար դժարութիւններ են առաջանում այնպիսի հմտութիւնների ձեւաւորման հարցում, ինչպիսիք են, օրինակ, գիրը, հաշիւը, ընթերցանութիւնը: Նրանք դժարութեամբ են յիշում այբուբենի տառերի յաջորդականութիւնը: Դա բոլորովին չի նշանակում, որ նրանք նւազ ընդունակ են:

Ձախիկ երեխաների մէջ գերակշռում են ստեղծագործական տաղանդով օժտւած եւ ոչ ստանդարտ մտածողութիւն ունեցող անհատականութիւններ: Նրանց շարքում յաճախ կարելի է հանդիպել գրականագէտների, լրագրող-



ների, արւեստի գործիչների, կազմակերպիչների:

Ձախիկ երեխաների ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակ անհրաժեշտ է հաշիւ առնել հետեւեալ առանձնայատկութիւնները.

-Չարկաւոր է փոխել տետրի դիրքը, եթէ այն յարմար չէ:

-Ձախ ուսը պէտք է լինի մի փոքր առաջ թեքւած, իսկ տետրը դրելու է 20° թեքութեամբ՝ դէպի աջ:

-Ձախիկ երեխան պէտք է գրի ուղիղ եւ գրութեան ժամանակ չպէտք է հետեւի տառերի ճիշտ թեքութեանը:

-Տետրի դիրքը որոշելու է ինքը՝

աշակերտը:

-Լոյսը պէտք է ընկնի աջ կողմից:

-Չակացուցւած է անընդմէջ գրաւոր աշխատանքի կատարումը:

-Անհրաժեշտ է ներողամիտ լինել ձախիկների, առաւել եւս՝ վերափոխւած ձեռքով գրողների հանդէպ:


Երկրագնդի վրայ ապրում են 500 միլիոնից աւել ձախիկներ:

Ներկայումս երեխաների 15-23%-ը ձախիկներ են:

Ձախիկութիւնը տղամարդկանց մօտ աւելի յաճախ է հանդիպում, քան կանանց:

Չանրաճանաչ մարդկանցից ձախիկներ են եղել՝ Ալբերտ Էյնշտէյնը, Լէօնարդօ դա Վինչին, Պարլօ Պիկասօն, Չարլի Չապլինը, Փոլ ՍակՔարտնին, Ֆրանց Կաֆկան, Ֆիդէլ Կաստրօն, ԱՄՆ-ի նախագահների մի մասը:

Աջիկներ եւ ձախիկներ կան նաեւ կենդանիների մէջ:



Այսու տպագրութեան ենք յանձնում Նոր Ջուղայի հայոց թեմի ազգային մարմինների գործունէութեան վիճայարոյց մի շարք դէպքերի մասին հետեւեալ յօդաժը: Հեղինակը իր տեղեկատուութիւնը եւ մեկնաբանութիւնները հիմնատրելու նպատակով, վկայակոչել է իր ձեռքի տակ ունեցած մի շարք աղբիւրներ եւ փաստաթղթեր, որոնց բոլորի ստուգումը թերթիս համար հնարատր չէր կարող լինել: Սակայն նախօրօք մեր պատրաստակամութիւնն ենք յայտնում հրատարակել յօդաժում շօշափած նիւթերի վերաբերեալ այլ անձանց տարբեր տեսակէտները եւ ուղղումները: Յատկապէս ուրախ կը

լինենք հրատարակել Նոր Ջուղայի հայոց թեմի բացատրութիւններն ու տեղեկութիւնները: Այսպիսով ընթերցողին թոյլ կը տանք, նկատի առնելով առկայ փաստերը եւ տեսակէտները, իր սեփական եզրակացութիւնը կատարել:

ԵՐԲ ՕՐԵՆՍԳԻՐԸ, ԳՈՐԾԱԳՎԻՃԱՅԱՐՈՅՑ ԶԱՐՅԵՐ Ն. ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ

Յրաչ Սիրգախանեան

1923թ. Մայիսի 19-ին Վիեննայում գումարում է Հայաստանի՝ իշխանութիւնը կորցրած Հ.Յ. Դաշնակցութեան կուսակցական խորհրդաժողով, որի որոշումներից մէկը հետեւեալն է.

«- Ձեռք առնել գաղութահայութեան ազգային ղեկավարութիւնը, ամէն գնով եւ կարելի բոլոր միջոցներով:» («Նոր Սերունդը Քաւութեան նոխազ» Թորգոմ Վեհապետեան, 1986, Բէյրութ, Գ. հատոր, էջ 46)

Խորհրդաժողովից յետոյ, գաղութներում ՀՅԴ-ի մարմինները լաւագոյնս իրագործեցին կուսակցութեան ընդունած որոշումը, «ամէն գնով եւ կարելի բոլոր միջոցներով» տիրեցին սփիւռքահայութեան ազգային ղեկավար դիրքերին:

Մասնաւորաբար Իրանում այն տեղի ունեցաւ իշխող վարչակարգի թոյլութեամբ ու լիակատար աջակցութեամբ: Արդիւնքում իրա-

նահայ բոլոր ազգային հաստատութիւնները եւ հարստութիւնը անցան ՀՅԴ-ի գերիշխանութեան ներքոյ, որը եւ աւելի ամրապնդեց 1958 թ-ին իրանահայ երեք թեմերի անօրինական միացումով Կիլիկիոյ կաթողիկոսութեանը: Դաշնակցականները գրաւեցին եւ թաքնուեցին եկեղեցական կառոյցներում, արդիւնքում դաշնակցականացեց ոչ միայն եկեղեցու վարչական կառոյցը, այլեւ հոգեւորականների մի մասը, եկեղեցական արարողութիւններն ու տօնակատարութիւնները, ազգային բոլոր դպրոցներն ու հաստատութիւնները եւ այսպիսով 400 ամեայ գաղութի մեծաքանակ ազգային բոլոր հարստութիւնները, հնարաւորութիւնները եւ կալւածները դարձան ՀՅԴ-ի սեփականութիւնը, որն էլ այն օգտագործեց եւ ղեռնէս օգտագործում է ըստ իր հայեցողութեան՝ ծառայեցնելով կուսակցութեան նպատակների

իրագործմանը:

Մի թուուցիկ ակնարկ նետելով իրանահայ հասարակական կեանքին, ակնյայտ է դառնում, որ գոյութիւն ունեցող բոլոր դաշնակցականամետ միաւորները տեղակայած են ազգապատկան կալւածներում եւ համարեա բոլորն էլ թաքուն եւ ակնյայտ նիւթա-բարոյապէս պաշտպանում եւ հովանաւորում են ազգային իշխանութիւնների կողմից: Խօսենք փաստերով.

-Թեհրանի Հեշմաթիէ թաղամասում ազգային բիւջէով կառուցւած «Հայ Տուն»-ը տրամադրել է «Սարաղարապատ» միութեանը:

-Արիեստաւորների միութեանն է յատկացւել «Արամ» սրահը:

-Ձարքեշ թաղամասի «Նայիրի» սրահը տրամադրւել է «Սիփան» միութեանը:

-«ՀՈՒՄԿ»-ը տեղակայւած էր ազգապատկան «Գաբրիէլեան»

շենքում: («Փոթորկոտ կեանքիս օրերը» Լ.Ահարոնեան, էջ 496)

-Ազգային բիւջէից տարեկան 25,000,000 թուման վճարում են «Հոլսկ»-ին «Պատգամ» պարբերականի 4 համարի հրատարակման համար:

-Նոր Ջուղայի «Սասուն» միութիւնը ՀՀ-ի հայ դատի գրասենեակը, Սպահանի եւ Շահինշահրի «Արարատ» միութիւնները տեղակայուած են ազգապատկան տարածքներում:

-Նոր Ջուղայի գերեզմանատան շրջափակում գտնուող ազգապատկան ֆուտբոլի դաշտի

ցախի վերաբնակեցման յանձնախումբ» անւանումների տակ, եւ պարզ չէ թէ ո՞ր մարմնին, անձին կամ կուսակցութեանն է վճարում այդ գումարները, մաւել չի ներկայացում այդ յատկացումների սպառման զեկոյցագրերը: Միայն 2007 թ. այդ անւանումների տակ վճարել է «Ջաւախքի օգնութիւն» 10.000\$, «Արցախ» 24.820\$ եւ «Արցախի վերաբնակեցման յանձնախումբ» 32.000.000. թուման: (ԹԽ 2007թ. Արտակարգ նախահաշիւ)

- Թեհրանի «Սուքերեան» սրահը, թաղի ժողովրդի օգտա-

քը կազմում է 6,000,000,000 թուման, տրամադրոււմ դաշնակցականամէտ այդ միութեանը, թեմի կանոնադրութեան ո՞ր կէտի համաձայն է կիրառոււմ նման քաղաքականութիւն: Դեռեւս «Հրազդան» միութեանը սրահից վտարելու ժամանակ ԹԽ-ի ժամանակի նախագահը յայտարարել է. «Թեմական կանոնադրութեան մէջ էլ, եթէ դուք վերցնէք եւ կարդաք,... երբեք գրած չի, որ մենք տեղ տանք որեւէ միութեան:» («Փիւնիկ» շաբաթաթերթ 23 Նոյ.1981)

Ի դէպ, անխտիր բոլոր ոչ դաշ-

ԻՐԸ ԵՒ ԴԱՏԱԻՈՐԸ ՆՈՅՆՆ Է

վարձակալութիւնից ստացուած եկամուտը (ամսական 12.000.000 թուման) տրամադրոււմ էր «Արարատ» միութեանը: (Տեղեկագիր Սպահանի Հայոց Թեմի Թեմական Խորհրդի (ԹԽ) 4 Փետրուար 2003 - 4 Փետրուար 2004, էջ 8)

-Սպահանի հայոց թեմի Պատգամաւորական ժողովը (ՊԺ) տարիներ ի վեր է, որ Թեմի համար նախատեսուած բիւջէում յատուկ գումարներ է յատկացնում եւ վճարում ՀՀ-ի անկախութեան Հայ Դատի գրասենեակին, առանց նրանցից պահանջելու նիւթաբարոյական զեկոյց :

-2007.թ. այդ գրասենեակին է վճարել 32,000,000 թուման (ԹԽ 2007թ.նախահաշիւ), իսկ նոյն հաստատութեան Եւրոպայի գրասենեակին 18,385 ԱՄՆ Դոլար (17,000,000 թուման): (ԹԽ 2007 թ. Արտակարգ նախահաշիւ)

-Իսկ 2011 թւականի համար առայժմ նախատեսուել է վճարել 42.000.000 թուման: (ԹԽ նախահաշիւ 1 Յունուար առ 31 Դեկտեմբեր 2011):

-Երբեմն էլ գումարներ է յատկացում եւ վճարում «Ջաւախքի օգնութիւն», «Արցախ» կամ «Ար-

գործման նպատակով կառուցել է ազգապատկան 2300 ք.մ. հողատարածքի վրայ, պոլսահայ սպայ հանգուցեալ Վահրամ Սուքերեանի կտակած գումարի եւ Թեմական Խորհրդի (ԹԽ) լրացուցիչ բիւջէով: Սակայն ՀՀ-ն իւրացրել է այն: Այն իւրացնելու նպատակով 1981-ին հիմնադրոււմ են «Նայիրի» միութիւնը, ապա բռնի ուժով ու սին պատճառաբանութեամբ, ՀՀ-ին չյարելու գերպատճառով, ժամանակի Թեմական Խորհրդի միջոցով սրահից վտարոււմ են թաղին պատկանող եւ ժողովրդին հարազատ «Հրազդան» միութեանը եւ սրահը տրամադրոււմ է «Նայիրի» միութեանը: («Փոթորկոտ կեանքիս օրերը» Լ.Ահարոնեան էջ 495)

-«Նայիրի» միութեան նախագահը 10 Յունիս 2010-ին «Ալիք» օրաթերթին տուած հարցազրոյցում յայտարարոււմ է, որ ցանկանում են այդ հողամասում սրահին կից բաց տարածքում միութեան համար կառուցել նոր կենտրոնատեղի:

Հարց է առաջանում, ինչո՞ւ է ազգապատկան այդ տարածքը, որի շուկայական մինիմալ արժե-

նակցական միաւորները, անձնաւորութիւնները եւ կարիքաւոր ընտանիքները զրկուած են այս բոլորից: Թեհրանի «Արարատ Ազգային մարզաւանը» ապօրինաբար իւրացել է «Արարատ» միութեան իրարայաջորդ դաշնակցականամէտ վարչութիւնների միջոցով, որոնց գործունէութիւնը վերջին շրջաններում ունեցել է աւերիչ հետեւանք: Նրանք փոխարէն զարկ տալու սպորտին, լծուած են ՀՀ-ի քաղաքականութեան իրագործմանը: Արգելոււմ են գաղափարական հակառակորդներից ոմանց, դրանց շարքում Հայաստանի կոմկուսի առաջին քարտուղար Կարէն Դեմիրճեանի մուտքը մարզաւան, կամ մարզական սրահը անւանակոչում ՀՀ-ի գործիչ Վաչիկ Ղարաբեգեանի անւամբ: «Արարատ»-ի վաստակաւոր վետերան մարզիկները փնտրուած գործիչներ են Իրանեան այլ մարզակոմբներում, սակայն գաղափարական հաւատամքների բերումով տեղ չունեն «Արարատ»-ի վարչութիւններում:

Թեհրանի Հեշմաթիէ թաղամասի «Էրեբունի», Ջէթուն թաղամա-

սի «Յրագրան», Նադերշահի թաղամասի «Արմեն» միութիւնները վտարւեցին ազգապատկան տարածքներից, արդիւնքում կազմալուծւեցին: Սեփական տարածք չունենալու գերպատճառով կազմալուծւեցին նաեւ թեհրանում «Սանահին», «Աբովեան», «Վանայ» եւ Սպահանի ու Շահինշահի «ԻԱՄՍ» միութիւնները: Ազգային տարածքից եւ նպաստից զրկւած է թեհրանում լոյս տեսնող քսանամեայ «Արաքս» շաբաթաթերթը:

Ցաւօք, այս բոլորը կիրառւում է նախօրոք ճշտւած քաղաքականութեամբ: Սպահանի հայոց թեմի 30-րդ ՊԺ-ը որոշում է. «Ազգային բնակարանները տրամադրել այն կարիքաւորներին, որոնք ունեն առողջ նկարագիր եւ գործօն մասնակցութիւն ազգային կեանքում»: (30-րդ ՊԺ-ի արձանագրութիւն էջ 34) Եւ երբ ծանօթանում ես նոյն ժողովի պատգամաւորներին, նկատում է, որ նրանց աւելի քան վաթսուն տոկոսը դաշնակցականներ կան «համակիրներ» են, եւ պարզ է նրանց մօտ առողջ նկարագիր ունեցողը «դաշնակցականն է», որը իր «գործօն մասնակցութեամբ» ազգային կեանքին, բոլոր ընտրութիւններում իր ձայնը տալիս է դաշնակցականներին:

Իրանի յեղափոխութեան յաղթանակից յետոյ ԶՅԴ-ի մենատիրութեան դէմ մեծ ցասում ու բողոք առաջացաւ իրանահայ համայնքներում, կազմակերպւեցին բողոքի ցոյցեր ու պոռթկումներ, ժողովուրդը ազգային մարմիններից պահանջում էր հաշւետւութիւն ու զեկոյց, պահանջում էին արդար ընտրութիւններ, բողոքողները ցանկանում էին մասնակից լինել ազգային կեանքին, իրազեկ լինել անց ու դարձերին, սակայն հանդիպեցին ԶՅԴ-ի բռն ու դիմադրութեամբ:

14 Մարտ 1979-ին Իրանահնդկաստանի Զայոց թեմի Առաջնորդ

Կորին Ծ. Վրդ. Պապեանի ստորագրութեամբ հրատարակւեց «Սիրոյ եւ Խաղաղութեան» անւանումը կրող երկարաշունչ մի կոչ: Սոյն գրութիւնում ժողովրդի արդար պահանջատիրութեան մասին նա գրում է. «... ստեղծել են մեր ժողովրդի մի խումբ մարդկանց մէջ անհասկացողութիւններ... մեր ազգային կեանքը խանգարող մի տխուր երեւոյթ» եւ այն վերագրում է «մութի մէջ գործող ձեռքեր»-ի:

Իրանահայ երեք թեմերի ազգապատկան կալւածների ու հարստութիւնների մասին, հանրութեան տեղեկատւութեան համար ոչ մի աղբիւր գոյութիւն չունի, ժողովրդի միջոցով ընտրւած պատգամաւորները տեղեկութիւն կան ձեռնահասութիւն չունեն այդ ցանկին: Ազգի իշխանաւորները յայտարարում են. «Ազգային կալւածների ցանկը իւրաքանչիւր ՊԺ-ին չի ներկայացւում, դրանց վերաբերող կալւածագրերը եւ փաստաթղթերը միշտ պահուում են մեր արխիւներում:» (Իրանահնդկաստանի Զայոց թեմի 28-րդ Պատգ. ժողովի արձանագրութիւն էջ 19)

Երբ թեմի բարձրագոյն մարմին հանդիսացող ՊԺ-ի անդամներից անգամ թաքուն են պահում կալւածների ցանկը, հետաքրքիր է իմանալ, հապա ո՞ր մարմինն է տեղեկ դրանից եւ տնօրինում այն, այսօրեայ պայմաններում ինչ՞նչ եւ ունի՞ց է քօղարկւում դրանք, ժողովրդի՞ց, թէ՞ Իրանի իշխանութիւններից:

ՆՈՐԱՇԵՆԻ ԿԱԼՎԱԾՆԵՐԻ ՀԱՐՅԸ

Սկսած 1979 թականից Նոր Զուղայի վանքապատկան «Նորաշէն» կոչւած կալւածները (1856-ին տարածքը 26 ջրիք («Պատմութիւն Ն.Զուղայի» էջ 498)), որ գտնւում է քաղաքի

լաւագոյն հատւածում, գրաւել էր պետական հիմնարկութիւնների ուշադրութիւնը, որոնք ցանկանում էին իւրացնել դրանք: 9 Ապրիլ 1984-ին «Քէյհան» օրաթերթում տպագրւած հաղորդագրութեամբ Սպահանի Գաւառապետարանը յայտարարում է, որ բռնագրաւել է «Նորաշէն» տարածքից 3000 ք.մ., որի համար էլ 1984-ի Օգոստոսին «Սաբթի միջոցով իր անունից ստանում է նոր կալւածագիր:» (Զաղորդագրութիւն Նոր-Զուղա 10 Նոյ. 1983 Դիւան Առաջնորդարանի)

Այս բոլորը չեզոքացնելու նպատակով թիւ-ը բանակցում էր պետական տարբեր հիմնարկութիւնների հետ եւ անւանի փաստաբան դոկտ. Օննիկ Սահակեանի համագործակցութեամբ դատ էր յարուցել նրանց դէմ:

Այս եւ մի շարք այլ ոտնձգութիւնների պատճառով Նոր-Զուղայի եւ Շահինշահի շուրջ 1000 հայերի ստորագրութեամբ կազմւեց մի դիմումագիր համախօսական, ուղղւած պետական օրգաններին, որում պահանջւում էր յետ վերադարձնել վանքապատկան կալւածները:

Համախօսականի ստորագրողների անունից «Յանձնախումբ» ստորագրութեամբ հրատարակւեց մի հաղորդագրութիւն, որում ասւած է.

«... 1985-ի Յունւարին սոյն համախօսականը ստորագրողների կողմից մի նամակ գրւեց թիւ-ին, որը ստորագրել էին Ն.Զուղայից եւ Շահինշահից 5 անձնաւորութիւններ, նամակում գրւած էր. «Անցեալում եւս այլ հողամասեր կան բռնագրաւել են ազգային մարմինների կամքից անկախ, կամ էլ վաճառւել են նրանց համաձայնութեամբ», եւ առաջադրելով մի շարք առաջարկներ, հարցադրել էին «Ի՞նչ ծրագիր ունեն մեր ազգային մարմինները եղած հողամասերի համար:» Թիւ-ը նամակին բանաւոր ձեւով պատաս-

խանելու պարտականությունը յանձնարարեց նույն խորհրդի անդամ Պրն. Ժորժիկ Աբրահամեանին:

ԹԽ-ի խօսնակը մեր պատվիրակներին փոխանցեց հետեւեալը.

« -Նախ պէտք չկայ մտահոգւելու 3000 մետր հողամասի վերաբերեալ եւ կարիք չկար ստորագրութիւն հաւաքելու, որովհետեւ այդ հողամասերը անպայման կը վերադարձնեն առաջնորդարանին:

-Առաջնորդարանը չունենալով անհրաժեշտ միջոցներ՝ բիւջէ, մասնագէտ, ծրագրող եւ գործադիր ուժեր չի կարող անել աւելին քան անում է: Եւ չի էլ կարծում, որ ուրիշները աւելի լաւ կարող են գործել:

-Առաջնորդարանը կարիք չունի ոչ ոքի, մասնաւոր դիմում կատարողների համագործակցութեանը, որովհետեւ կարծում է, որ դրանց առաջարկները միտումնաւոր են եւ կասկածելի:

-ԹԽ-ը պատասխանատու չի մի քանի անհատների, որոնք իրենց համարում են ժողովրդի ներկայացուցիչ:»

Սակայն ցաւօք հակառակ ԹԽ-ի խօսնակի պնդումներին, ոչ միայն այդ 3,000 ք.մ. չի վերադարձել առաջնորդարանին, այլ 1979-ին դարձեալ նոյն հողատարածքից 8,000 ք.մ. յանձնել է Իսլ. Մշակոյթի եւ Առաջնորդութեան Նախարարութեանը եւ փոխարէնը ստացել է՝ Սպահանում մէկ թեմապատկան կալւածի գործառնութի փոփոխութեան եւ Սպահանի արւարձանում գտնուող Շահինշահի քաղաքում 15,000 ք.մ. մարգա-մշակութային գործառնութի հողատարածքի տրամադրման ԽՈՍՏՈՒՄ, որոնք եւ չեն իրականացել մինչեւ 2011 թ. Յունւարի 16-ը: (ԹԽ-ի տեղեկագիր 16 Փետրուար 2010 - 15 Յունւար 2011 էջ 10) Աւելին 32-ամեայ բանակցութիւնների ու սակարկութիւնների

րի արդիւնքում խոստացած 15,000 ք.մ.ը վերածել է 7,000 ք.մ.ի բնակարանային գործառնութի: (ԹԽ տեղեկագիր 10 Փետրուար 2008 - 15 Փետրուար 2009 էջ 7) (Ի դէպ Շահինշահի մէկ ք.մ. հողատարածքի շուկայական արժեքը հաւասար է 150,000 թումանի, իսկ յանձնած հողատարածքինը՝ 6,000,000 թումանի):

ԳԵՐԵՉՄԱՆԱՏԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԲՆԱԿԱՐԱՆԱՇԻՆՈՒ- ԹԵԱՆ ԾՐԱԳԻՐ

Նոր Ջուղայի հայկական գերեզմանատան տարածքում, շիրիմաքարերից դէպի հարաւ գոյութիւն ունի հսկայական ազատ հողատարածք: ԹԽ-ը որոշեց այդ հողատարածքում իրականացնել բնակարանաշինութեան ծրագիր, որը իրականացնելու համար անհրաժեշտ էր քաղաքապետարանի համաձայնութիւնը եւ հողատարածքի մասնատումը: Այդ նպատակով 2002 թ. կատարած բանակցութիւնների արդիւնքում, քաղաքապետարանին վճարել է 247,537,500 թուման: (ԹԽ 2001-2002թթ. հաշւետախտակ սիւնեակ 26 եւ 2002- 2003թթ. տեղեկագիր, էջ 9) Սակայն հողատարածքի մասնատումը չի իրականանում գումարի վճարումից 9 տարի անց: 2009 թ. պարզուում է, որ մշակութային ժառանգութիւն հիմնարկը չի արտօնում նման նախաձեռնութեան իրականացումը: Վճարած գումարը յետ ստանալու աշխատանքների ընթացքում ի յայտ է գալիս, որ քաղաքապետարանին վճարած գումարը եղել է ոչ թէ 247,537,500 այլ 190,000,000 թուման: (ԹԽ տեղեկագիր 10 Փետրուար 2008 - 15 Փետրուար 2009, էջ 7)

Ո՛ւր մնաց հաշւետախտակներում ներկայացւած ծախսած



գումարի 57,537,500 թումանը: Եթե ընդունենք, որ այսօրեայ պայմաններում աշխատանքները իրականանում են յաւելեալ եւ ոչ պաշտօնական վճարումների՝ կաշառքի շնորհիւ, հապա ինչո՞ւ չի իրականանում այն կաշառքը վճարելուց յետոյ եւս: Եւ ինչո՞ւ է 2002թ. նիւթական զեկուցագրում պաշտօնական վճարումը եւ կաշառքը (եթէ այդպիսին է) միատեղւած զեկուցել միեւնոյն անւան տակ: Իհարկէ բարեմիտ լինելու համար պէտք է խոստովանել, որ որոշ գործարքներում երբեմն պատահում են նման ձախողութիւններ, բայց երբ ազգային իշխանութեան համարեա բոլոր աշխատանքներն են ունենում նման աւարտ, այդ դառնում է կասկածելի եւ ունենում կործանիչ հետեւանք, ինչը պատահեց վերը նշւած սցենարի հեղինակի հետ, որը հեռացւեց ազգային, զուգէ եւ, կուսակցական զբաղեցրած դիրքերից, որը պէտք է համարել դրատանքի արժանի, սակայն 30 տարով ուշացած քայլ:

Նոր Ջուղայի հայկական գերեզմանատան արեւելեան անմիջական հարեւան՝ Սպահանի պետական համալսարանը ակամայից կամ դիտաւորեալ գրաւել եւ զբաղեցրել էր գերեզմանատան տարածքից 16.000 ք.մ.: Բանակցութիւնների անարդիւնաւէտութեան պատճառով գործը յանձնւում է դատարան, դատը շահում է թխը, դատավճռում որոշում է յետ վերադարձնել 12.000 ք.մ. առգրաււած տարածքը, եւ երբ ՊԺ.ում հարց է տրուում թէ ինչո՞ւ է 16.000 ք.մ.ի փոխարէն յետ վերադարձում միայն 12.000 ք.մ. թխ-ի ժամանակի նախագահը պատասխանում է, թէ դա մեքենագրական սխալութեան արդիւնք է, որ դատը յարուցելու ժամանակ թոյլ է տւել մեր քարտուղարը: (Այս տեղեկութիւնները առկայ են ՊԺ-ների արձանագրութիւններում, որոնք չեն տրամադրուում անգամ պատգա-

մաւորներին: Սպահանի ՀԹ Թեմական եւ Կրօնական Խ-ների տարեկան զեկուցագրերից մէկական օրինակ տրամադրուում է պատգամաւորներին:)

Ի դէպ նոյն թխ-ի նախագահը պաշտօնավարում էր Սպահանի պետական համալսարանում: Դատը շահելուց յետոյ էլ նա եւ ... համաձայնեցին, որ առանց վարձատրութեան, այդ տարածքը մնայ համալսարանի տրամադրութեան տակ:

ՅՈՎՍԵՓ ՊՕՂՈՍԽԱՆԵԱՆԻ ՀԻՄՆՂԱՆՈՅԻ ԿԱԼԻՍՏԵՐԸ

Տասնեակ տարիներ է, ինչ փակել է բարերար Յովսէփ Պօղոսխանեանի՝ 1904 թ. Ապրիլ 25-ի մարդասիրական կտակով կառուցւած եւ ժողովրդին հսկայական ծառայութիւն մատուցած «Յովսէփ Պօղոսխանեան» ազգային հիւանդանոցը:

Հիւանդանոցի փակումից տարիներ անց, նրա հսկայական այգին հատեց նորակառոյց մի պողոտայ, հողամասի մնացած հատւածը յայտնւեց նորակառոյց պողոտայի եզրին եւ բազմապատկւեց դրա շուկայական արժէքը, որը եւ գրաւեց շատերի ուշադրութիւնը:

2002-2003 տարեշրջանին թխը որոշեց սոյն հողամասի մի հատւածում կառուցել 8 յարկից բաղկացած մի համալիր: Շինարարութեան բիւջէի հայթայթման համար ընտրուեց ներդնող անձ, որպէս գործընկեր տոկոսային 60- 40 յարաբերութեամբ (Թխ 5 Փետրուար 2004-26 Յունուար 2005 տեղեկագիր, էջ 9), որին եւ յանձնւեց շինարարութիւնը իրականացնելու պարտականութիւնը: Գործընկերոջ հետ կնքւած պայմանագրի անյստակութեան կամ այլ պատ-

ճառներով տարբեր անհամաձայնութիւններ առաջացան թխ-ի եւ նրա միջեւ, որոնք առկայ են թխ-ի տարեկան զեկոյցներում: Ի վերջոյ թխը 2007-ին առանց անփոփելու գործարքից ստացւած շահը, կամ վնասը, զեկուցում է, որ աւարտել է շինարարական աշխատանքը եւ հաշւեփակում է կատարել գործընկերոջ հետ: (Թխ 21 Յունուար 2006 - 30 Յունուար 2007 տեղեկագիր, էջ 13)

Պատգամաւորական ժողովներից մէկում, մի խումբ դաշնակցական պատգամաւորները խնդիր են յարուցում, որ այդ շէնքի կառուցումը մեծ վնաս է պատճառել ազգային ունեցւածքին եւ պահանջում են հաշւեքնութիւն: Դաշնակցական 3 պատգամաւորների անդամակցութեամբ կեանքի է կոչում քննիչ յանձնախումբ: Մի քանի ամիս անց յանձնախումբը զեկուցում է, որ շինարարութիւնը իրականացւել է շատ մեծ վնասով, սակայն չեն հրապարակել վնասի չափը: (Առկայ են ՊԺ-ների արձանագրութիւններում :)

Ն. ԶՈՒՂԱՅԻ ԲԼՈՒԲԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

1980 թականին Նոր Ջուղայի «Հայոց Ակումբ»(Բլուբ)-ում ոչ դաշնակցականների միջոցով իրականացւում էին ժողովրդական հաւաքներ, թատերական ներկայացումներ, կազմակերպւում գրքի ցուցահանդէսներ, որոնցից մէկը ենթարկւեց դաշնակցականների յարձակմանը, հրի մատուցեցին ցուցադրւած գրքերը, ծեծի ենթարկւեցին պատասխանատուները եւ ի վերջոյ ոստիկանութեան միջամտութեամբ եւ ազգային իշխանաւորների ցանկութեամբ փականք դրեց դարպասների, երբ հէնց նոյն ժամանակ համայնքը կարիք ուներ այդ վայրին, ԻԱՄՄ-ի Նոր Ջուղայի մասնաճիւղը, որը վայելում էր մեծ թուով

մարդկանց համակրանքը, իր աշխատանքները իրականացնում էր վարձու մի խարխուլ շինութիւնում: Որոշ ժամանակ անց, մի քանի տարով այն յատկացւեց Իրան-Իրաքի պատերազմից տուժած ընտանիքների ժամանակաւոր բնակութեան համար: Այժմ 30 տարի է, ինչ այդ ազգապատկան մշակութային կենտրոնը չի ծառայում իր կոչմանը: Վերջին տարիներում մէկ միլիարդ թումանից աւելի ծախսերի գնով վերանորոգւեց այն:

ԹԽ-ի 1 Փետրւար 2002 - 28 Յունւար 2003 միամեայ գործունէութեան տեղեկագրի էջ 11-ում ասւած է. «Սկսւել է Ակումբի հիմնական նորոգութեան եւ բարեփոխման աշխատանքը» եւ յայտարարւել է, որ «այն ծառայելու է իբրեւ համայնքի անդամների հաւաքավայր ...» իսկ 4 Փետրւար 2003 - 4 Փետրւար 2004-ի տեղեկագրի էջ 6-ում ասուում է որ՝ «որոշւեց նրա մէկ յարկը ծառայի որպէս Ազգագրական Թանգարան», իսկ 15 Փետրւար 2005 - 20 Յունւար 2006 տեղեկագրի էջ 9-ում ասուում է «նկատի ունենալով շէնքի ճարտարապետական աւանդական ոճը, կատարւած նիւթական մեծ ներդրումը, վայրը ծառայեցնել զբօսաշրջութեան առնչւող աշխատանքներին:»

Այս ընթացքում շէնքի հետագայ օգտագործման համար ԹԽ-ի կողմից յայտարարութիւն է հրատարակւել համայնքում առաջարկութիւնների, նախագծերի եւ վարձակալութեան դիմումների ընդունման համար: (ԹԽ 21 Յունւար 2006 - 30 Յունւար 2007 տեղեկագիր, էջ 14): Իսկ 10 Փետրւար 2008 - 15 Փետրւար 2009 տեղեկագրի էջ 6 ում ԹԽ-ն յայտարարում է «դիմումների ընտրութեան աշխատանքը ընթացքի մէջ է:

Ակումբի պաշտօնական բացումը կատարւեց 2008 թականի Դեկ.26-ին Գերաշնորհ Սրբազան Դօր աղօթքով: (ԹԽ 10 Փետրւար 2008 - 15 Փետրւար 2009 տեղե-

կագիր, էջ 14)

17 Մարտ 2009 - 15 Փետրւար 2010 տեղեկագրի էջ 13-ում յայտարարում է. «Նկատի ունենալով, որ առհասարակ առկայ է Ակումբի առելտրական արտօնագիր չունենալու պարագան, փորձ է կատարւել խնդիրը լուծել այլ շփումներով ու դասաւորութիւններով, սակայն դեռեւս որեւէ յստակ նախատեսութիւն չենք կարող ունենալ հաւանական խոչընդոտների կապակցութեամբ:»

Եւ վերջապէս 16 Փետրւար 2010 - 15 Փետրւար 2011 տեղեկագրի էջ 12 նշուում է՝ . «անհրաժեշտ է այն օժտել առելտրական արտօնութեամբ, որի համար պիտի մեծ գումարներ վճարել քաղաքապետարանին». «...որ խորհուրդս ի վիճակի չէ Ակումբի խանութները ներկայ կացութեամբ վարձակալութեան յանձնել:»

Ի՞նչ ստացւեց: Ազգապատկան չքնաղ կալւածները ջրի գնով ու ապօրինաբար վաճառեցին, ստացւած գումարից նորոգեցին Ակումբը, խաչ ու Աւետարանով կատարեցին բացումը, եւ դարձեալ փակեցին այն, եւ հիմա էլ բացէիբաց ասում են «յստակ նախատեսութիւն չենք կարող ունենալ հաւանական խոչընդոտների կապակցութեամբ:» կամ «խորհուրդս ի վիճակի չէ Ակումբի խանութները վարձակալութեան յանձնել:»

Ի՞նչ է, սկզբից չգիտէի՞ն, որ «Ակումբ»-ի հսկայական շինութիւնը չունի առելտրական արտօնագիր:

Նման ծախսատար եւ մեծ աշխատանքները այսպէս չեն իրականանում, նախ տնտեսագէտների միջոցով ուսումնասիրում եւ յստակեցւում է վայրի օգտագործման նպատակայարմարութիւնը, ապա ըստ քաղաքաշինութեան կանոնակարգի, արտօնւած մասնագէտների միջոցով կազմւում է շինարարական նախագիծ, որը եւ համաձայնեցւում է քաղաքապե-



տարանի հետ եւ ճշտում պետական վճարումների չափը եւ վճարման եղանակը: Այնուհետ այս ծախսը գումարած շինարարական այլ ծախսերի հետ ներառում են նախահաշվի մէջ եւ մեր պարագայում ներկայացում ՊԺ-ին եւ հաստատում ստանալուց յետոյ, գործադրում:

Ուրեմն, պարզում է, ինչպէս միշտ, այս պարագայում եւս առանց որեւէ լուրջ ուսումնասիրութեան եւ «հէնց այնպէս» է կատարել այս աշխատանքը եւ մտնել ազգային ունեցածքից հսկայական գումարներ:

8 յարկ համալիրի կառուցման, «Հայոց Ակումբ»-ի նորոգութեան նաեւ թեմական հորհրդի այլ նախաձեռնութիւնների ծախսերը հայթայթելու պատճառաբանութեամբ 2001-2002 ժամանակահատուածում ՀԱՎԱՌԱԿ ՊԺ-ի ՈՐՈՇՄԱՆ (առկայ է ՊԺ-ների արձանագրութիւններում) վաճառում են «Պօղոսյանեան» հիւանդանոցի մասնատուած հողամասերի միանգամից 5 կտորը՝ ընդհանուր 3910,13 ք.մ.:

Ն. ԶՈՒՂԱՅԻ ԳՊՐՈՅՆԵՐԸ՝ ԱՄԱՅԻ

Ն. Զուղայում գոյութիւն ունեն բազմաթիւ դպրոցական կանգուն շէնքեր, որոնց մեծ մասը կառուցւել են բարերարների կտակներից ստացւած գումարներով: Սրանց շարքում են «Քանանեան», «Կատարիներեան», «Արմէն», «Գիշերօթիկ» եւ... հոյասքանջ շէնքերը:

- 2007-ին որոշում է «Արմէն» դպրոցի բակում կառուցել նոր շէնք՝ «Ն.Զուղայի Հայոց Ազգային կրթահամալիր» անւան տակ, 3,000 ք.մ. յատակագծով:

Շինարարութիւնը աւարտւել է եւ պաշտօնական բացումը կատարւել է 2010 թ. Սեպ. 23-ին:

Ի՞նչ է լինելու աւանդական դպրոցների ճակատագիրը, ի՞նչ

նպատակի պէտք է ծառայեն այդ կառույցները, որոնք բոլորն էլ կանգուն շէնքեր են, եւ հնարաւոր էր նոր համալիր կառուցելու ծախսի միայն մի քանի տոկոսով արդիականացնել դրանք, որով կը խնայւէր ծախսուած գումարի մեծ տոկոսը եւ ճարտարապետական կոթող համարող այդ շէնքերը գերծ կը մնային ապագայի չնախատեսուած վտանգներից կամ բռնագրաւումից:

Այս օրերին, երբ աշխարհի տարբեր երկրներում իրանահայութիւնը մեծ շուքով ու խանդավառութեամբ տօնում է «Քանանեան» եւ «Կատարիներեան» դպրոցների հարիւր ու քանիամեակները, Նոր Զուղայում սառը քամին մոլազար ոռնում է նոյն դպրոցների կանգուն ու հիւրընկալ դահլիճներում ու դասարաններում ու տարածում նրանց մօտալուտ մահւան գոյժը: Մնում է թխ-ի մի այլ «կամայ թէ ակամայ» հաղորդագրութեամբ յայտարարւի դրանց հոգեհանգստեան ու օտարման վերջին արարը:

ՆԵՐՊՐՈՒՄՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

-Ցաւալի վիճակում են թեմական հորհրդի ներդրումները Հայաստանում: Եկամուտ ապահովելու միտումով Հայաստանում գնել են 2 բնակարան վարձու տալու նպատակով, նշանակել են գործակատար, սակայն բնակարանների վարձից ստացւած գումարները չեն փակում գործակատարի աշխատավարձ:

-Հայաստանում գնել են «Ջերմուկ-Բլու» կաթնամթերքային հիմնարկի 49 տոկոսը եւ մինչեւ 2004 թւականը վճարել են 120.000 ԱՄՆ դոլար, (Թխ 4 Փետրուար 2003-4 Փետրուար 2004 տեղեկագիր, էջ12) բոլոր զեկոյցներում էլ յայտարարում են, որ 51 տոկոսի փայտէր՝ հայաստանցի

գործընկերը հաշւետու չի իրենց, չի համագործակցում եւ չեն կարողանում վաճառել այն:

«ՍԱՅԵՐ ՍԷՅՐ» ՕԴԱՆԱԿՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

-2000թ. թեմական հորհուրդը հակառակ համայնքի անդամների կամքին ազգային հնարաւորութիւններով ու յատկացւած տարածքում հիմնադրում է «Սայեր-Սէյր» Օդանաւային գործակալութեան ընկերութիւնը: Չուսումնասիրուած այս նախաձեռնութեան 10-ամեայ գործունէութիւնը ակարտուց մեծ նիւթական վնասներով: Նրա գործադիր տնօրէնը իւրացրեց ընկերութեան գումարների մի մասը եւ խոյս տուց արտասահման: Այս կապակցութեամբ հետաքրքիր է ընթերցել հատուածներ Թխ-ի տեղեկագրերից: Թխ-ը իր զեկոյցներից մէկում գրել է. «Թւում է թէ համայնքի մէջ այդ ուղղութեամբ գրոյցներ շատ գնացին, բայց մենք կարծում ենք, որ թեմական հորհուրդը ինքը ամէնից շատ տեղեկ է դրան առնչակից թերութիւններին ու առաւելութիւններին:» (24 Նոյեմբեր 1999 - 24 Յունւար 2001 տեղեկագիր, էջ 20)

Իսկ մէկ տարի անց զեկուցում են, որ ընկերութեան գործադիր տնօրէն Պրն. Զարեհ Բաբախանեանի շրջանից հեռանալուց յետոյ՝. « ... Թեմական հորհուրդը հանդիպեց մի շարք անորոշութիւնների «Սայեր-Սէյր» Ընկերութեան հաշիւների ու գործունէութեան կապակցութեամբ:» Որ «յանձնարարուց ... քննել «Սայեր-Սէյր»-ի ամբողջ հաշւական ու նիւթական գործունէութիւնը:» (30 Յունւար 2001- 31 Յունւար 2002 տեղեկագիր, էջ10)

Եւ դարձեալ մէկ տարի անց յայտարարում են, որ « ... Պրն. Զարեհ Բաբախանեանի շրջանի

... հաշվեքննութեան աշխատանքը կատարել է առկայ փաստաթղթերի հիմամբ. քննութեան ընթացքում երեւան են եկել մի շարք խնդիրներ, որոնց պարզելու հեռանկարը եւ հնարաւորութիւնը՝ եղած փաստաթղթերի եւ մատեանների միջոցով, ցաւօք գոյութիւն չունի ... :» (1 Փետրուար 2002 - 28 Յունուար 2003 տեղեկագիր, էջ14)

-Ի վերջոյ 2009թ. յայտարարուում է՝ «...նկատի ունենալով ստացւած զեկուցումները՝ ըստ որոնց թեմապատկան «Սայեր-Սէյր» Օդանաւային գործակալութեան ընկերութիւնը ընդհանրապէս շահաւէտ գործունէութիւն չունի, ... Խորհուրդս որոշում է ընդունել կազմալուծել ընկերութիւնը ...:» (10 Փետրուար 2008 - 15 Փետրուար 2009 տեղեկագիր, էջ12)

Յատկանշելի է, որ այս ընթացքում Պրն. Զարեհ Բաբախանեանը անդամակցում էր Թեմական Խորհրդին եւ վարում գանձապահի պարտականութիւնները, միեւնոյն ժամանակ նա հանդիսանում էր Թեմական եւ կրթական Խորհրդների կապը: (24 Նոյեմբեր 1999 - 24 Յունուար 2001 տեղեկագիր, էջ 1 եւ 2)

Այստեղ առաջանում է հարցերի երկար շարան: Ինչո՞ւ էր միայն Պրն. Զարեհ Բաբախանեանը արժանի ստանձնելու այդ աշխատանքը: Ինչպէ՞ս նա յայտնւեց այդ պաշտօնում: Ո՞վ էր երաշխաւորում նրան, եւ ...

-Այս միջադէպից յետոյ ինչպէս միշտ, ոչ մի դատական գործ չարուցւեց, ոչ ոք պատասխանատւութեան չկանչւեց, հրապարակաւ ոչ մի մարմին չդատապարտեց այդ արարքը, միայն ՊԺ-ի նիստերից մէկում բաւարարւեցին նրան անւանել «վատ ընկեր»:

Իրարայաջորդ Թեմական Խորհուրդների զեկուցագրերը լեցուն են, «կարծում ենք», «թւում է թէ», «հաշւետու չէ», «անորոշու-

թիւններ», «պարզելու հեռանկար գոյութիւն չունի», «պատասխանատու չէ», «շահաւէտ գործունէութիւն չունի», «ցաւօք», «գողութիւն», «այլ շփումներ», «մենք ամէնից շատ տեղեակ ենք» եւ... բառերով ու ինքնագոհ ու անիմաստ արտայայտութիւններով, պարզում է ամէն ինչը անորոշ է ու յանձնւած բախտի քմահաճոյքին, գոյութիւն չունի ուսումնասիրւած նախագիծ ու գործելաճ, բացակայում է թափանցիկ նիւթաբարոյական հաշւետւութիւն, եւ ...:

Ո՞վ է պատասխանատու այս բոլորի համար, ՊԺ-ն, որն իր անդամների մեծամասնութեամբ, յաճախ անտեսելով առանձին անդամների քննադատութիւններն ու հարցադրումները, կուրօրէն հաստատում է նման ծրագրերը, հաշւեքննիչ մարմիննե՞րը, որոնց չի ներկայացւում ամբողջական հաշւետւութիւն, Թեմական Խորհուրդների անդամնե՞րը, որոնք ամենաթանձր մաղումներից յետոյ գաղափարական պատկանելութեան գերպատճառով նշանակւում են կուսակցութեան միջոցով, թէ՞ ինքը կուսակցութեան ղեկավարութիւնը, որը ենթակայ չէ ոչ մի օրէնսդրութեան եւ պատասխանատու չէ ոչ մի մարմնի, եւ որի անդամների անւանացանկը չի յայտարարուում որեւէ տեղ:

Դժբախտաբար իրանահայ ազգային կոչւած իշխանութիւնում չկայ պատասխանատւութեան զգացում, այստեղ բոլոր անցուդարձերը ենթակայ են կուսակցութեան կամքին, հայեցողութեան ու թելադրանքին: Իսկ բողոքողների դէմ փակւում են անգամ «Ակումբ»-ների, Մարգարեան»-ների ու «Եկեղեցի»-ների դարպասները:

Թւում է թէ այս բոլորի պատասխանատունն է Յայ Յեղափոխական Դաշնակցութեան շրջանային կոմիտէն է, որը շրջանում հանդիսանում է թէ՛ օրէնսդիր, թէ՛ գործադիր է եւ թէ՛ դատական մարմին:



ՄԵԼԱՍԱՂՁՈՏ ՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՊԱՏՄԻՉԸ՝ ՔԱՉՈՒՑ ԻՇԻԳՈՒՐՈՒ

Շանթ Բաղդասյան

«Երբեք ինձ մի լքիր»-ը /Never Let Me Go/ ծագումով ճապոնացի, իսկ այժմ Անգլիայի քաղաքացի, Քազուո Իշիգուրոյի /Kazuo Ishiguro/ վերջին վեպի խորագիրն է: Պատմությունը սկսում է Արեւելեան Սասեքսի գիւղերից մէկում՝ մի մթազնած ու յատուկ կարգ ու կանոններով, գիշերօթիկ դպրոցում: Վէպում նկարագրւում է երեխաների, ի մասնաւորի վեպի հիմնական եռեակի՝ Րուֆի, Թամի եւ Քաթիի կեանքն ու փոխարաբերութիւնները: Քիչ անց յայտնի է դառնում, որ դպրոցում սովորողները, սովորական երեխաներ չեն, այլ նրանք տարրալուծարանում ստեղծած մարդկային քլոններ են: Դպրոցը ոչ թէ սովորական ուսումնարան է, այլ սպանդանոց՝ երեխաներին պահում են մինչ հասունացման տարիք, որից յետոյ նրանց մարմնի տարբեր անդամները փոխանցւում է սովորական հիւանդ մարդկանց, որի կարիքը ունեն:

Այս գիտաֆանտաստիկ մոտիւր սարսափելի իրավիճակներ է ստեղծում Իշիգուրոյի վէպում: Դպրոցում քլոնացած երեխաներից պահանջւում է նկարչութիւններ քաշել, քանգի նրանց նկարչութիւնները փոխանցւում է արւեստագէտ մի կնոջ, այն նպատակով, որ ուսումնասիրութիւններ կատարի ու պարզի, թէ արդեօ՞ք քլոն երեխաների մօտ մարդկային զգացմունքներ գոյութիւն ունեն թէ ոչ:

Ապա պատմութիւնը առաջընթաց է խաղում՝ եռեակի յարաբերութիւնների, հասունացման, մարդկային յոյզերի դրսեւորման,



սիրային քաշքշուկների հիման վրայ: Նրանք գլխի են ընկնում իրենց վախճանի մասին ու սկսում են պայքարել այդ սարսափելի ճակատագրի դէմ: Մինչ այն աստիճան, որ Քաթին ու Թամը գնում են արւեստագէտ կնոջ մօտ՝ Թամի նկարչութիւնները ցուցադրելու համար, այն մտայնութեամբ, որ կինը կը հաստատի, որ նրանց մօտ մարդկային զգացմունքներ կան, եւ իրօք նրանք սիրում են միմեանց: Այս ամէնը նրա համար, որ միգուցէ կանխելի դառնայ չարաբաստիկ աւարտը: Բայց ...



«Երբեք ինձ մի լքիր» վէպը, որ եղել է «Բուքըր» գրական մրցանակի յաւակնորդների ցանկում, ստացել է «Ալեքս» գրական մրցանակը, եւ համարել 2005 թւականի «Թայմ»-ի լաւագոյն վէպերի ցանկում, իսկ 2010 թւականին, այս վէպի հիման վրայ պատրաստւել է համանուն ֆիլմ՝ Մարկ Րոմաննիկի միջոցով:

«Երբեք ինձ մի լքիր» վէպը,

Իշիգուրոյին «Բուքըր» մրցանակի կրկնակի դափնեկիրը չդարձրեց: Նա առաջին անգամ այդ մրցանակին արժանացել էր 1989 թւականին, իր «Օրւայ մնացորդը» /The remains of the day/ վէպի շնորհիւ: Մի վէպ, որի հիման վրայ պատրաստւած ֆիլմը 1993-ին Անտոնի Դաակինգի գլխաւոր դերակատարութեամբ Օսկարի 8 մրցանակի յաւակնորդը դարձաւ: «Օրւայ մնացորդը» վէպում Իշիգուրոն մանրամասնօրէն բացայայտում է վէպի հերոսի, մեծահարուստ տան ծառայողի ներաշխարհը՝ նրա յոյզերն ու սէրը հանդէպ Միս Քենթոնին, ու նաեւ նրա տկարութիւններն ու անյաջողութիւնները սիրոյ արտայայտման ու զգացմունքների վերլուծման հարցով:

Իշիգուրոն իր վէպերում օգտւելով առաջին դէմքի հերոսից, որը պատմում է իր անյաջողութիւնների ու տկարութիւնների մասին, ընթերցողի համակրանքն է առաջացնում վէպի կերպարների եւ ընդանրապէս մարդու իրավիճակի հանդէպ: Իշիգուրոյի հերոսները մեղաւորներ չեն, սակայն նրանք միշտ գտնւում են մեղքի ու ցաւի մէջ:

Քազուո Իշիգուրոն ծնւել է 1954 թւականին ճապոնիայի Նակագակի քաղաքում: Նա լքել է ծննդավայրը 1960 թւականին իր ընտանիքի հետ մեկնելով Անգլիա: Նրա առաջին ու երկրորդ վէպերը «Բլուրների աղօտ պատկերը» /A Pale view of hills/ (1982) եւ «Լողացող աշխարհից մի արւեստագէտ»-ը /An artist of floating world/ ճապոնական թեմաներ ու միջավայր ունեն, սակայն դրանից



յետոյ գրած վէպերը, ինչու չէ նաեւ նրա կարճ պատմածքները (ինչպիսին է «Գիշերայիններ. Զինգ պատմածք երաժշտութեան ու գիշերամուտի մասին» /Nocturnes: Five stories of music and nightfall/ (2009)) արեւմտեան եւ համամարդկային մոտիւմեր ունեն:

«Վայթբըրդ» /Whitebird/ մրցանակի դափնեկիր Իշիգուռօն մագիստրոսի աստիճանի է արժանացել «Իստ Անգլիա» համալսարանից հեղինակային գրականութեան մասնագիտութեամբ 1980 թւականին, իսկ նրա «Անմխիթարելի» /The Unconsoled/ (1995) վէպը նրան արժանացրել է «Չելթընհամ» մրցանակով: Նրանով հանդերձ, որ 6 տարեկանից Իշիգուռօն լքել է ճապոնիան ու 30 տարի անց չի վերադարձել, սակայն յա-

ճախ լրագրողները հարցնում են իրեն թէ՛ ինչքանով է ճապոնական մշակոյթն ու անցեալը, Նակագակիի դէպքը եւ ... ազդել նրա գրածքների վրայ: Իսկ Քազուօն պատասխանում է՝ «Քիչ, ես վաղ հասակից եմ լքել ճապոնիան ու իմ առաջին երկու գրածքները խիստ երեւակայութիւնից բխած գործեր են, ոչ իրական, այնուամենայնիւ ճապոնական ֆիլմարեստը ու ինչու չէ Ջունիչիրօ Թանիգաքին ազդել են իմ գրական ոճին»:

Վերջիվերջոյ այսօր Իշիգուռօն հաստատուած վիպասան է: Նա համարում է անգլիագիր գրականութեան փայլուններից («Թայմզ»-ը Իշիգուռօյին դասել է յետպատերազմեան անգլիական գրականութեան լաւագոյն 50-ի ցանկում) ու նրա վէպերը ճանաչ-

ած են ու թարգմանուած: Այնուամենայնիւ նրա ճապոնական ծագումը իր թաքուն հետքն է թողել նրա երկերի վրայ՝ ճապոնական գրական «Մոնոնօավար» (Ցաւ իրողութիւնների ու գոյականների հանդէպ /Pathos of thing/) հասկացողութիւնը արտացոլում է նրա վէպերի աւարտին՝ հերոսները մեւջամաղձոտ պարտութիւն են կրում ու ընդունում իրավիճակը: Վէպի հերոսները մի տեսակ ցաւ են զգում գոյնի ու իրողութեան հանդէպ եւ ընդունում են ստեղծուած իրավիճակը, եւ դա մի տեսակ փրկում է նրանց մարդկային անկումից ու թրուութիւններից, եւ առիթ ստեղծում Իշիգուռօյի համար խօսելու մարդկային իրավիճակից ...

ՍՈՑԻԱԼՆԵՐԸ ԵՒ ԲԼՈԳՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻԿԱՅ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ

Գայիանէ Մկրտչեան

Հայաստանեան վիրտուալ իրականութիւնում՝ սոցիալական ցանցերում եւ բլոգաֆերայում, նախընտրական տարւայ շեմին փոփոխուող տրամադրութիւնները կը ստեղծեն քաղաքական նոր բովանդակութիւն:

«2012-ին սպասուում են խորիրդարանական, 2013-ին՝ նախագահական ընտրութիւններ, ինչն արդէն իսկ զգացուում է: Քաղաքական ուժերը կօգտագործեն սոցիալական ցանցերը՝ որպէս քարոզչութեան հիմնական հարթակներից մէկը, քանի որ աւանդական լրատւամիջոցներն ինչ-որ առումով իրենց սպառել են,- ասում է բլոգեր Սամէլ Մարտիրոսեանը: - Վիրտուալ իրականութիւնում սպասուում է քաղաքական թժ աշուն»: Հայաստանում սոցիալական ակտիւ քննարկումների տիրոյթ է «Ֆէյսբուք» (ՖԲ) սոցիալական ցանցը, որտեղ այսօր գրանցւած են 184 հազար հայաստանցիներ, ինչը կազմում է բնակչութեան 6,23 տոկոսը: Մարտիրոսեանն ասում է, որ դեռեւս 2010-ի գարնանից «Ֆէյսբուք» սկսեց քաղաքականացւել եւ դառնալ քաղաքացիական ոլորտների լուրջ դերակատար: Հայաստանեան պաշտօնեաներից ՖԲ-ում իրենց անձնական էջերն ունեն վարչապետ Տիգրան Սարգսեանը, Աժ նախագահ Գրիգոր Արարահանեանը, Երեւանի քաղաքապետ Կարէն Կարապետեանը: Այստեղ են մուտք գործել նաեւ մի շարք քաղաքական գործիչներ, Աժ պատգամաւորներ: Աժ պատգամաւոր, ԶՅԴ խմբակցութեան անդամ Լիլիթ Գալստեանը մի քանի ամիս է՝ ինչ գրանցւել է ՖԲ-ում: Ասում է, որ այստեղ էջ է բացել՝ ոչ թէ տուրք տալով վիրտուալ նորա-



ծնութեանը, այլ պարզապէս փորձում է «ծեռքը զարկերակի վրայ պահել»: «Այսօր անհնար է հաշի չնստել վիրտուալ իրականութեան հետ: Անգլիական ասացւածք կայ՝ տեղեկացւած լինելն ամենամեծ հարստութիւնն է: Եթէ այդ ամէնին գումարում են նաեւ իմ՝ քաղաքական գործիչ լինելու հանգամանքը, ապա ուղղակի պարտադիր է», - ասում է օրէնսդիրը: Աժ «Ժառանգութիւն» խմբակցութեան ղեկավար Ստեօպա Սաֆարեանի համար ՖԲ-ն մի վայր է, որտեղ իրեն տեսախցիկով չեն նկարահանում, կարիք չունի ծիգ նստելու եւ դէմքի լուրջ արտայայտութիւն ընդունելու: Կարող է մէկ գաւաթ սուրճը դնել կողքին եւ ազատ արտայայտել առանց որեւէ մէկին խնայելու: «Հայաստանեան ՁԼՄ-ներում լուրջ քննարկումների չես հանդիպում: Մի քանի բլոգներ կան, որոնց ժամանակ առ ժամանակ հետեւում էի, մասնակցում, ինչն էլ յաճախ լց-

ւում էր հայիոյախօսութեանը: ՖԲ-ն զերծ է այդ արատներից, մենախօսութիւններ չկան: Մարդիկ աւելի քիչ են թաքնուում կեղծանունների յետեւում, ինչը թոյլ է տալիս գնալ կոռեկտ ու չափաւոր բանավէճի», - ասում է Սաֆարեանը: Նրա համար ՖԲ-ը մարդկանց տրամադրութիւնները հասկանալու ու անկեղծութեան վայր է: «Զգիտեմ՝ պարադոքսն ո՛րն է, բայց մարդիկ, գիտե՞նալով, որ հրապարակային խօսք են ասում ՖԲ-ում, գիտե՞նալով որ իրենց «պրոֆիլը» տեսանելի է, ինքնութիւնը՝ ընկալելի, չափազանց անբռնազբօսիկ ու ազնիւ են արտայայտուում, քան կարտայայտելին տեսախցիկների առաջ կամ մամուլում», - ասում է նա: Պատգամաւորների կարծիքով՝ ՖԲ-ը քաղաքական գործիչ լաւագոյն գործիքն է՝ «օնլայն» հեղինակութիւն ձեռք բերելու, իսկ նախընտրական տարում այն ուղղակի կը ծառայի որպէս քարոզչամեքենայ:

ՍԹԻՍԸ ՀԱՇՄԱՆՊԱՍՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌ

Գիտնականների կարծիքով նոյնիսկ թեթև ապրումները կարող են հաշմանդամութեան ու երկարատև անաշխատունակութեան պատճառ դառնալ: Սակայն մարդիկ սովորաբար թերագնահատում են այդ վտանգը:

Անց է կացել հետազոտություն, որին մասնակցել են մինչև 64 տարեկան անելի քան 17 հազար աշխատող մարդիկ: Փորձի մասնակիցներին ընտրել են Ստոկհոլմի բնակիչներից՝ պատահականութեան սկզբունքով:

Հետազոտությունն անց է կացել 2002-2007 թթ., յայտնում է «Շաբաթային փաստարկներ» թերթը: Կամավորներին առաջարկել են լրացնել յատուկ հարցաթերթիկ, որի օգնությամբ գիտնականները գնահատել են նրանց հոգեկան առողջությունն ու սթրեսի մակարդակը: Հետազոտում հարցման մասնակիցներից 649 մարդ հաշվառել է որպես հաշմանդամ: Նրանցից 203-ը հաշմանդամ է դարձել հոգեկան առողջութեան վատացման պատճառով: Իսկ մնացածների հաշմանդամութեան պատճառը



«Անկառավարելի լրջագոյն գործիք է, բայց միև կողմից՝ ներքին օգտատերերը պետք է ներքին ցենզուրան պահպանեն: Նախընտրական տարում կօգտագործի որպես հանրային կարծիք ձեւաւորող գործիք, ՖԲ-ը, իհարկէ, նաեւ մեծ աւանտիրա է», - ասում է Գալստեանը: Media.am-ի պրոդիւսեր, սոցիալական մեդիայի դասաւանդող Գեղամ Վարդանեանի կարծիքով՝ նախընտրական դիրքաւորման գործընթացի մեկնարկը տրւած է: Ըստ նրա՝ մինչև 2012-ի ընտրութիւնները ՖԲ-ում գրանցւածների թիւը կը մեծանայ, եւ բոլոր լուրջ դերակատարները կօգտագործեն ՖԲ-ն որպէս քարոզչական գործիք: Այդուհանդերձ, հայաստանեան գրեթէ բոլոր կուսակցութիւնները՝ թէ՛ ընդդիմադիր, թէ՛ իշխանական, իրենց ներկայութիւնն ապահովել են սոցցանցերում: Սոցիալական ցանցեր են շարունակւում քաղաքական գործիչների հոսքը: Վարդանեանը, սակայն, ասում է, որ քանակով շատ բան չես փոխի, պետք է ներգրաւեն խելացի, մտածող, խօսքի կշիռն իմացող մարդիկ: «Պէտք է կարողանան «օնլայն» հեղինակութիւն ստեղծել եւ մարդկանց ներգրաւել», - ասում է նա: Գալստեանի կարծիքով՝ եթէ պատգամաւորը 500 հազար դոլարով գնում է իր պատգամաւորական աթոռը, ապա թքած ունի ոչ միայն ՖԲ-ի, սոցցանցերի, այլեւ ընդհանրապէս լրատութեան եւ հանրային կարծիքի վրայ: «Այդ մարդիկ պետք է գիտակցեն, թէ ինչ է համացանցը, սոցիալական ցանցը, ունենան այդ ամէնի հետ աշխատելու մշակոյթ, ինչը, ցաւօք, չկայ», - ասում է նա: Իսկ ո՞րն է քաղաքականութիւնում անելի օգտակար՝ սոցցանցերը, թէ՞ բլոգը: «Բլոգը

ծանր հրետանի է, ՖԲ-ը՝ թեթև: Բլոգում կարող ես մեծ յօդած գրել ու ակտիւացնել, ՖԲ-ն այդ հնարաւորութիւնը չի տալիս: Ակտիւութեան առումով սոցցանցերում շատ անելի մարդիկ են նստած, բլոգում դու ունենում ես մշտական ընթերցողներ, - ասում է Վարդանեանը: - Այսօր բլոգ ունեն մտածող, ասելիք ունեցող մարդիկ: Բլոգը վերլուծական ու ընդհանրացնող տարածք է, սոցցանցում այդ ամէնը քննարկւում է»: 2008-ին ՀՀ նախագահը ստեղծեց իր բլոգը, որն այսօր պասիւ է: Այնուհետեւ վարչապետ Տիգրան Սարգսեանը բացեց իր անձնական բլոգը, եւ մինչև այսօր էլ այն ակտիւ է: Մի քանի ամիս է՝ ինչ բլոգ է բացել նաեւ «Ժառանգութեան» պատգամաւոր Սաֆարեանը: «Բլոգն առանց պատերի տարածութիւն է, որի յետեւում որեւէ մէկի ականջները տեսանելի չեն, եւ դու ոչ մէկի ճամբարից չես: Նիւթը կարող է քննադատութեան արժանանալ բովանդակութեան համար, կարող են քեզ հետ վիճել, բայց այստեղ դուրս է գալիս կեղծ հարցադրման հարցը, թէ ո՞ւմ ճամբարից ես, կամ ո՞ւմ պատւերով է նիւթը գրել», - ասում է նա: Սաֆարեանը նշում է, որ քաղաքական գործիչի համար թէ՛ բլոգը, թէ՛ սոցցանցը հիանալի գործիքներ են: Վարդանեանի կարծիքով՝ լուրջ քաղաքական գործիչը պետք է բլոգ բացի, իսկ նախընտրական տարում քարոզչական թիւերում կը լինեն ինտերնետային տեխնոլոգիաների նոր մասնագէտներ: «Նրանք էլ խորհուրդ կը տան քաղաքական ուժերին՝ ինչ ռազմավարութիւն ընտրել օնլայն հեղինակութիւն վաստակելու համար», - ասում է նա:

Աղբիւր՝
www.armenianow.com

ֆիզիկական վատառողջութիւնն է դարձել:

Գիտնականները նկատել են հետեւեալ օրինաչափութիւնը՝ հիմնականում հաշմանդամ են դարձել այն մասնակիցները, ովքեր հետազօտութեան սկզբում սթրեսի աւելի բարձր մակարդակ են ունեցել: Բայց նոյնիսկ սթրեսի ցածր մակարդակ ունեցող մասնակիցների՝ հաշմանդամ դառնալու հաւանականութիւնը սովորականից մեծ է:

Հաշմանդամ դարձած մասնակիցներից իւրաքանչիւր չորրորդն ունէր սրտամկանի արատ, արեան բարձր ճնշում եւ կաթնածախ: Հոգեկան վատառողջութեան հետեւանքով հաշմանդամութեան դէպքերի երկու երրորդը պայմանաւորած է սթրեսով: Ինչպէս գրում է eWSLad-ը, այդ արդիւնքները պէտք է դիտարկել աշխատանքային ու սոցիալական ժամանակակից կեանքի համատեքստում՝ շրջապատի մարդկանց աջակցութեան բացակայութիւն եւ այլն:

Կին պաշտօնամուկները յաճախ են սրտային հիւանդութիւններ ունենում:

Ինչպէս վստահեցնում են ամերիկացի հետազօտողները՝ կարիերա անելու մոլուցք ունեցող կանայք մի քանի անգամ աւելի են

տառապում սրտային հիւանդութիւններից, քան այն կանայք, ովքեր իրենց աշխատանքին հանգիստ են վերաբերում: Հարցմանն աւելի քան 17000 կին է մասնակցել: Հետազօտողները պարզել են մասնակիցների ծառայողական յաջողութիւնների պատմութիւնը եւ նրանց կարիերայի փուլերը համեմատել առողջական վիճակի հետ: ԱՄՆ-ի հետազօտողների տւեալներով հարցման մասնակից կարիերանով կանանց 88 տոկոսը մի քանի անգամ աւելի յաճախ է տառապել սրտի նոպաներից: Հետազօտութիւնների արդիւնքները նաեւ ցոյց են տւել, որ կանանց 43 տոկոսը սրտի հիւանդութիւններ է ունեցել, որովհետեւ իրենց ներուժը բացառապէս ինքնաբերական չէն ունեցել:

Բանջարեղէնակերութիւնն այնքան օգտակար չէ, որքան թւում է:

Թւում է, թէ բանջարեղէնակերութիւնը սրտանօթային համակարգի համար լաւագոյն սննդակարգն է: Այն ներառում է հիմնականում օգտակար ճարպեր, ինչն էլ նւազեցնում է աւելորդ քաշ կուտակելու հաւանականութիւնը:

Սակայն իրականում բանջարեղէնակերութեան ջատագովմե-

րը յաճախ են հիւանդանում աթերոսկլերոզով եւ անօթների խցանմամբ: Այսպիսի եզրակացութեան են յանգել գիտնականները՝ համապատասխան վերլուծութիւնից յետոյ:

Անկասկած՝ մոլի մսակերներն անօթներն աւելի մեծ վտանգի են ենթարկում, բայց կենդանական մթերքներից լրիւ հրաժարելը նոյնպէս ծայրայեղութիւն է: Նրանք, ովքեր միս, ձուկ, կաթ չեն օգտագործում, ամենեւին էլ աւելի պաշտպանւած չեն:

«Գիւղատնտեսական եւ սննդի քիմիայի ամսագիր»-ում հրատարակւած՝ բանջարեղէնակերութեան մասին յօդածի հեղինակ Դուօ Լին ընդգծում է, որ բանջարեղէնային սննդակարգը չի պարունակում բաւարար քանակութեամբ մանրատարրեր՝ երկաթ, ցինկ, վիտամին B12 եւ օմեգա 3 ճարպաթթուներ:

Յատկապէս անփոխարինելի են ճարպաթթուները, որոնց քանակը նոյնիսկ բանջարեղէնային հաւասարակշռւած՝ բաւականաչափ սպիտակուց պարունակող սննդակարգում, միեւնոյն է, քիչ է: Դա նշանակում է, որ հոմոցիստեինի քանակն արեան մէջ բարձրանում է, իսկ լաւ խոլեստերինի մակարդակը՝ իջնում, ինչը յանգեցնում է սրտանօթային ախտերի:

Որպէսզի բանջարեղէնային սննդակարգը չվնասի՝ անհրաժեշտ է աւելացնել օմեգա-3 ճարպաթթուների ու վիտամին B12-ի գործածումը: Առաջիններով առատ են ձկներէնը, ընկոյզը, ինչպէս նաեւ բուսական ծագման իւղերը: Իսկ վիտամին B12 պարունակում է գերազանցաբար կենդանական սննդի մէջ, օրինակ ծովամթերքների, կաթնամթերքների, ձի: Դրա համար էլ եթէ բանջարեղէնակերներն ուզում են լրացնել դրանց պակասը՝ ստիպւած են օգտագործել սննդային յատուկ յաւելումներ:



ԻՆՉՈ՛Ւ Է ՏԵՍԱՆԿԻՒՆԸ ԿԱՐԵՒՐ



Այս կառույցին նայեք: Արդեօք որեւէ պատգամ է փոխանցում ձեզ:



Աւելի ուշադիր նայեք: Մի ուրիշ տեսանկյունից: Կրկին ոչ մի պատգամ:

Ինչպէս տեսնում էք, մի բան, որ սկզբում մեզ համար անհիմաստ էր, մի որոշակի տեսանկյունից, գեղեցիկ, գեղարուեստական եւ իմաստալի է երեւում: Երբ չարչարուում էք մի մաթեմատիկական խնդիր լուծելու, երբ մտածում էք մի հասարակական դժարութեան համար մի ելք գտնելու, եւ բացի ձեր ուղեղն յոգնացնելուց ուրիշ արդիւնք չէք ստանում, երբ կազմում էք ձեր բոլոր հնարաւորութիւնների ու կարողութիւնների ցանկը՝ ձեր նպատակն իրագործելու համար, եւ կրկին անկարող էք որոշում կայացնել, այսպիսի ժամանակներում, այն ինչ կարող է ձեզ օգնել, տեսանկյունի փոփոխութիւնն է, ոչ թէ աւելի կենտրոնանալը եւ նոյն տեսանկյունից հարցը դիտելը: Նոյնիսկ հաւաքական իմաստութիւնը, եթէ չցանկանայ իր տեսանկյունը փոխել, եւ պնդում է հարցերը դիտել նոյն տեսանկյունից, չի կարող ցանկալի արդիւնքի հասնել:



Ուրեմն Հարկատր է մի ուրիշ կողմից նայել:

Այժմ մի քանի տւեալներ Մուհամեդալի Քլէյի այս արձանի մասին: Այս գեղեցիկ կոթողը կերտւել է Մայքըլ Քլէյի միջոցով: Այն բաղկացած է բռնցքամարտի 2500 տոպրակներից, տաս եւ կէս կիլո-

մետր մետաղալարերից, եւ 1100 մետր ալիւմինէ խողովակներից: Այս վեցեւէտ մետրանոց կառույցի կերտման գործը տւել է երեք տարի:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԴԱՐՁԱՒ ԱՇԽԱՐՀԻ ԳԵՄՊԻՈՆ

Արման Տ.Ստեփանեան



Զինաստանի Նինթօ քաղաքում, կայացաւ շախմատի լաւագոյն հաւաքականների 9 օրեայ մրցութիւնը: Այս մրցութեանը մասնակցել էին աշխարհի լաւագոյն 10 հաւաքականները, որոնց շարքում էին Հայաստանը, Ռուսաստանը, Ադրբեջանը եւ մի շարք ուրիշ

երկրներ: Կարելի է ասել թէ մրցութեանը մասնակցում էին աշխարհի գրեթէ բոլոր լաւագոյն շախմատիստները: Հայաստանի հաւաքականը շատ փայլուն ներկայացաւ այս մրցաշարին, եւ չունենալով անգամ մէկ պարտութիւն, դարձաւ հետեւեալ մրցու-

թիւնների ախոյեանը: Հայաստանը այս մրցութիւններին ներկայացնում էին Լեւոն Արոնեանը, Գաբրիէլ Սրազսեանը, Սերգէյ Մովսիսեանը, Ռոբերթ Յովհաննիսեանը եւ Վլադիմիր Յակոբեանը:

Լեւոն Արոնեան

Արոնեանը ծնւել է 1982 թւականի Հոկտեմբերի 6-ին Երեւանում: Շախմատ խաղալը սկսել է 9 տարեկան հասակում իր քրոջից: Համարում է միջազգային գրոսմայստեր ինչպէս նաեւ 2005-ի աշխարհի գաւաթակիր, Հայաստանի հաւաքականի կազմում 37-րդ եւ 38-րդ համաշխարհային օլիմպիադաների եւ 2011 թ. աշխարհի թիմային առաջնութեան յաղթող, բազմաթիւ գերմրցաշարերի, ՖԻԴԵ-ի Մեծ մրցանակի, Բիլբաս Մեծ սաղաւարտի յաղթող, 2009-ի արագ շախմատի աշխարհի չեմպիոն, 2008-ի եւ 2009-ի Ֆիշերի շախմատի աշխարհի չեմպիոն, 2010-ի կայծակնային շախմատի աշխարհի չեմպիոն, 1999-ի Հայաստանի չեմպիոն: 2011-ին Մոնակոյում նա մասնակցեց, կոյր արագ շախմատի «Ամբեր» աւանդական մրցաշարին եւ դարձաւ նրա վերջին յաղթողը (մրցաշարն այլեւս չի անցկացւելու): Երկու տարի անընդմէջ՝ 2005-ին եւ 2006-ին, մարզական լրագրողների հարցմամբ ճանաչւել է Հայաստանի լաւագոյն մարզիկ: 2011-ի Յուլիսի 1-ի դրութեամբ անհատական վարկանիշով աշխարհի 3-րդ շախմատիստն է (2805 միաւորով):





Պարրիշ Սարգսեան

Ծնել է 1983 թականի Փետրուարի 3-ին Երեւանում: Հայ շախմատի գրոսմայստեր է:

1996 թ. - Աշխարհի չեմպիոն (մինչեւ 16 տարեկաններ)

1998 թ. - Եւրոպայի չեմպիոն (մինչեւ 18 տարեկաններ)

2000 թ. - Հայաստանի տղամարդկանց չեմպիոն

2003 թ. - Հայաստանի տղամարդկանց չեմպիոն

2006 թ. - Օլիմպիական չեմպիոն

2008 թ. - Օլիմպիական չեմպիոն

2008 թ. - Ճանաչել է Հայաստանի լաւագոյն մարզիկ

Հայաստանի Հանրապետութեան նախագահի հրամանագրով պարգեւատրել է «Հայրենիքին մատուցած ծառայութիւնների համար 1-ին աստիճանի» մեդալով:



Սերգէյ Մովսիսեան

Ծնել է 1973 թականի Նոյեմբերի 3-ին Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում: Երկար տարիներ էր, ինչ նա խաղում էր Սլովակիայի հաւաքականում, սակայն 2010-ին նա իր ցանկութիւնը յայտնեց խաղալ Հայաստանի համար: Մովսիսեանը անուսնացել է աշխարհի կանանց գրոսմայստեր Պետրա Կռուպկովայի հետ: Սերգէյ Մովսիսեանը տիրապետում է 8 լեզուների:

Ռոբերթ Յովհաննիսեան

Յովհաննիսեանը համարւում է Հայաստանի հաւաքականի ամենակրտսեր անդամը: Ծնել է 1991-ի Մարտի 23-ին: 2010 թականին ստացել է շախմատի գրոսմայստեր կոչումը:



Վլադիմիր Յակոբեան

Հայաստանի հաւաքականի ամենաաւագ այս մարզիկը ծնել է 1971-ին Սովետական Ադրբեջանում:

Յակոբեանը եղել է՝ 1986-ին՝ մինչեւ 16, 1989-ին՝ մինչեւ 18, 1991-ին՝ մինչեւ 20 տարեկան շախմատիստների աշխարհի չեմպիոն, 1996 եւ 1997 թականներին Հայաստանի հաւաքականի կազմում համաշխարհային օլիմպիադաների եռակի չեմպիոն, 1992, 2002 եւ 2004 թականների աշխարհի թիմային առաջնութիւնների եռակի, 1997, 2001 եւ 2005թթ. Եւրոպայի թիմային առաջնութեան բրոնզէ մեդալակիր, 1995թ. «Երեւան» թիմի կազմում Եւրոպական ակումբների գաւաթի յաղթող, Կազանի, Տոմսկի եւ Ուրալի թիմերի կազմում՝ Ռուսաստանի ակումբների առաջնութիւնների յաղթող, 1999-ին աշխարհի փոխչեմպիոն: Մրցաշարի ընթացքում Յակոբեանը յաղթելով Սամեդեարովին փրկեց Հայաստանի հաւաքականին շատ լարւած Հայաստան-Ադրբեջան պարտելուց:



ԱՆԳՐԱՆԻԿ ՉԱՓԱՐԵԱՆԸ՝ ԵՐՈՂԱՅԻ ԱՍՈՅԵԱՆ



Պրահայում ակարտւեց ջուդոյի երիտասարդների եւրոպայի գաւաթի խաղարկութիւնը: Անդրանիկ Չափարեանը 73կգ քաշային կարգում գրաւեց 1-ին տեղը, իսկ վանաձորցիներ Գարիկ եւ Գոռ Յարութիւնեանները գրաւեցին 3-րդ մրցանակային տեղը 55 եւ 60կգ քաշային կարգերում:

ԻՐԱՆԻ ԸՄԲԵԱՍԱՐՏԻ ՅԱԳՈՂՈՒԹԻՒՆԸ

Իրանի երիտասարդական ըմբշամարտի հաւաքականը, Ռումանիայի մրցութիւններում յաջող հանդէս եկաւ եւ գրաւեց երրորդ տեղը: Իրանի հաւաքականի համար ոսկէ մեդալ նաւեցին Յամեդ Թալեբին եւ Ջաբեր Սադեղզադէն 96 եւ 120կգ քաշային կարգերում: Այսպիսով Իրանը 46 միաւորներ հաւաքելով Ռուսաստանի եւ Վրաստանի հաւաքականներից յետոյ գրաւեց երրորդ տեղը: Դա ինքնին ուրախանալու առիթ է, քանի որ անցեալ մրցութիւնների համեմատ Իրանը բաւականին լաւ առաջընթաց է ունեցել:

«Յոյս» երկշաբաթաթերթը Վաճառուում է

«Բեթիովեն» Գրախանութ

خیابان کریم خان زند-سنایی-پلاک ۲۳
تلفن ۸۸۳۱۳۸۶۸

Art system



خدمات ماشینهای اداری


سرویس و تعمیر چاپگرهای لیزری جوهرافشان HP و سوزنی EPSON

تلفن: ۴-۸۸۳۱۵۳۴۳ و ۷-۸۸۳۲۱۴۳۶

فکس: ۸۸۸۳۳۰۰۰

آدرس: تهران، خیابان ایرانشهر جنوبی، پایین تراز خیابان سمیه،

شماره ۷، طبقه سوم، واحد ۵



ՀՈՐԻՋՈՆԱԿԱՆ

- 1-Յայ գրող, երգիծաբան, 1888-1965 - դրոյիչ միջոց:
- 2-Հոլովակերտ մասնիկ - փոս աման - ցաւ, որ գալիս է այն կողմից:
- 3-Պատմութեան մէջ ամենավայրենի պետութեանը կապաւոր - թրջոց սարքել:
- 4-Աշխարհի բնական հրաշալիքներից - Իրանի քաղաքներից:
- 5-Շատ սիրելի - այսպիսի խուլերը առհասարակ վտանգաւոր են:
- 6-Թերութիւն ունեցող - ժամանակահատուած:

- 7-Մինչեւ այժմ - բռնի խլել, կորզել:
- 8-Մայրական քնադէղ... - դասական:
- 9-Խոհանոցային իր - գործողութիւն - ելնելը՝ անհնար, դժար, ծանր:
- 10-Կրօնական հաստատում, թող այսպէս լինի - մամուլի տուն - վշտի նշան:
- 11-Չարմացական ճիչ - ծաղիկի տեսակ - կրկնութիւնը մայր:
- 12-Անյայտ թիւ - հայոց հին մայրաքաղաքներից - ածական հաւի համար:
- 13-Պարզ թիւ - որովհետեւ - հիւսիսային Եւրոպայի մայրաքաղաքներից:

- 14-Լաւ համբաւ չունեցող, տխրահռչակ - բնական զէնք վայրի գազանների մօտ:
- 15-Կիրառում, գործադրում - մարմնի սիւնն է - պարսկական իգական անուն:

ՈՒՂԱՅԱՅԵԱՑ

- 1-Իտալացի մեծագոյն նկարիչ, քանդակագործ, գիտնական,1452-1519:
- 2-Ունայն - կենդանիների խումբ - մակերեսի միաւոր:
- 3-Իրանահայ տարաբախտ բանաստեղծուհի - ցածից՝ հայ դերասանուհի:
- 4-Ուղեկցող գրութիւն - գլխավայր՝ մահճակալ- թրջուած:
- 5-Հին ազգութիւն - փոքրացման ածանց - կերուած նուշ:
- 6-Խաւար, մռայլ - հողամաս - պայթելը, ճաքելը:
- 7-Սահմանուած չափ - սահմանային քաղաք Հայաստանում:
- 8-Խօսիր - դառնահամ խեղից ստացւող քիմիական նիւթ:
- 9-Ուղղոր. սխալով՝ գոյնզգոյն թելերից պատրաստուած ժապաւէն - առանց տեսգրի սահմանային անցում:
- 10-Ազոտաթթի աղ - այս էլ՝ սովորականը:
- 11-Անաչառ, անկողմնակալ՝ ուղղոր. սխալով - լափող, հարստահարող:
- 12-Յայ գրող, խմբագիր, Եղեռնի զոհերից,1874-1915 - գլուխ:
- 13-Դրումի մման թաղ ունեցող բոյս - ունկնդրել - մարզական թիմերի խմբաւորում:
- 14-Օժանդակ բայ - Իրանի նահանգներից - սելով սպիտակի վրայ...
- 15-Գիւղական աշխատավայր - ոչ թանձր - վիշտ կամ անհանգստութիւն պատճառով:

Անցեալ համարի պատասխանները

5	7	8	1	4	2	6	3	9
2	3	4	6	5	9	1	8	7
6	1	9	3	8	7	5	2	4
7	6	5	2	1	8	4	9	3
9	2	1	4	6	3	7	5	8
4	8	3	7	9	5	2	6	1
1	4	2	9	3	6	8	7	5
8	9	6	5	7	1	3	4	2
3	5	7	8	2	4	9	1	6

1	6	9	7	5	4	3	8	2
3	7	5	2	8	9	1	6	4
8	4	2	1	3	6	7	5	9
6	1	4	3	7	2	5	9	8
9	3	7	8	4	5	6	2	1
2	5	8	9	6	1	4	3	7
5	9	1	4	2	3	8	7	6
7	2	3	6	1	8	9	4	5
4	8	6	5	9	7	2	1	3

5	1	7	8	9	2	4	3	6
3	4	8	6	1	7	9	5	2
9	2	6	3	4	5	8	1	7
4	6	9	7	3	1	5	2	8
7	5	3	2	6	8	1	9	4
1	8	2	9	5	4	7	6	3
6	3	4	1	7	9	2	8	5
2	7	1	5	8	3	6	4	9
8	9	5	4	2	6	3	7	1



مادام یلنا آودیسیان و فعالیت‌های هنری او

دوهفته‌نامه
اجتماعی فرهنگی
هووس

شماره ۱۰۴، ۱۹ مرداد ۱۳۹۰
سال پنجم



چپ‌دستی چیست؟

صاحب امتیاز و مدیر مسؤول:
لئون آهارونیان

دبیر تحریریه: روبرت صافاریان

شورای نویسندگان:

کارمن آذریان

لیا خاچکیان

گارون سرکیسیان

آرمینه ملیک ایسرائلیان

مدیر هنری: لیا خاچکیان

ویراستار بخش فارسی: نسیم نجفی

وب سایت: کاجیک صافاریان

ورزش: آرمان استپانیان

اشتراک: کاترین یعقوبی

نشانی: تهران، خیابان انقلاب، بین

ولی عصر و فلسطین، شماره ۱۰۴۸

تلفن: ۶۶۴۹۵۱۸۰

۶۶۴۹۲۶۹۳

تله-فاکس: ۶۶۴۹۵۲۰۸

نشانی وب سایت:

www.hoos.com

وب سایت فارسی:

<http://farsi.hoos.com>

پست الکترونیکی:

hoos@inbox.com

در این شماره

- | | |
|----|---|
| ۲ | در صفحات ارمنی این شماره |
| ۴ | ژیرایر لیباریدیان: مرز ارمنستان و ترکیه هرگز باز نبوده است |
| | گئورگ استامبولتسیان |
| ۶ | زندگی فرهنگی ارمنیان باکو |
| ۷ | نگاهی به کتاب یک روز مانده به عید پاک |
| | روبرت صافاریان |
| ۸ | دو افسانه از کتاب قصه‌ها و افسانه‌های ارمنی به ترجمه آندرانیک خچومیان |
| ۱۰ | کانون هنر کافسجیان در قلب کاسکاد |
| | ر.ص. |
| ۱۱ | موسیقی در خانواده پانوسیان |
| | هویک میناسیان |
| ۱۲ | از شاگردان مادام یلنا بوده ... ؟ |
| | لیا خاچکیان |

بخش ارمنی

- | | |
|---|-------------------------------------|
| ۲ | جامعه آرامنه ایران |
| ۳ | تنها نسخه کتاب تومانیان |
| ۴ | لحظه سرنوشت‌ساز در تاریخ مردم ارمنی |
| | ژیرایر لیباریدیان |

چپ‌دستی چیست؟

- | | |
|----|---|
| ۶ | دیدگاه‌های تروریست نوژی، از جمله درباره ارمنستان و آرامنه |
| ۱۰ | وقتی قانونگذار، مجری و قاضی یکی است: |
| | مسائل بحث‌برانگیز در کارنامه شورای خلیفه‌گری اصفهان |
| | هراج میرزاخانیا |
| ۱۸ | راوی داستان‌های اندوهناک: کازانو ایشیگورو |
| | شانت باقرامیان |
| ۲۰ | شبکه‌های اجتماعی و وبلاگ‌نویسی در انتخابات آینده ارمنستان |
| | گایانه مگردچیان |
| ۲۱ | استرس می‌تواند به فلج بیانجامد |
| ۲۳ | اهمیت زاویه دید |
| ۲۴ | ورزش |
| | آرمان استپانیان |
| ۲۷ | سرگرمی |

گوشه‌هایی از آنچه در صفحات ارمنی این شماره هویس آمده است



مهاجران مسلمان بوده است. او در مانیفست خود که در اینترنت منتشر شده است، دیدگاه‌های خود را بیان کرده است. او مناقشات دنیای امروز میان مهاجران مسلمان به اروپا و بخشی از جمعیت بومی این کشورها را ادامه جنگ‌های صلیبی و جنگ بین مسلمانان و مسیحیان می‌داند. به‌رینگ در نوشته‌های خود بارها به وضعیت مسیحیان در امپراتوری عثمانی و کشتار مسیحیان توسط سلطان‌های عثمانی اشاره کرده و قتل عام ارمنه را از جمله این کشتارها دانسته است. در نوشته‌های او اشاره‌هایی هم به مسأله قره‌باغ وجود دارد.

لیباریدیان درباره مشکلات ارمنستان
لحظه سرنوشت‌ساز در تاریخ مردم ارمنی. این عنوان مقاله مفصلی است به قلم ژیرایر لیباریدیان، مشاور ارشد لئون تر پتروسیان در دوران ریاست جمهوری وی. (برای اطلاعات بیشتر درباره لیباریدیان به ص ۴ بخش فارسی همین شماره مراجعه کنید). او در این مقاله مهم‌ترین مسئله و بزرگترین تهدید برای جمهوری ارمنستان را مهاجرت می‌داند، خالی شدن کشور از سکنه که آن را در برابر انواع فشارها و تهاجمات خارجی آسیب‌پذیر می‌سازد. لیباریدیان در بخشی از مقاله خود می‌نویسد:

مالی با ناکامی روبه‌رو شده است. در پایان نویسنده می‌پرسد مسئول این وضعیت کیست؟ نمایندگان مجمع نمایندگان که اکثریت‌شان بدون توجه به انتقادات وارد به پیشنهادات کورکورانه آن‌ها تصویب می‌کنند؟ بازرسان این مجمع که گزارش‌های جامع ارائه نمی‌کنند؟ اعضای شورای خلیفه‌گری که از طرف حزب برگزیده می‌شوند؟ یا خود حزب که به هیچ ارگان و هیچ قانونگذاری پاسخگو نیست؟ پاسخ نویسنده این است که مسئول این اوضاع کمیته منطقه‌ای حزب دانشکوتیون است که یک تنه نقش قانونگذار، مجری و قاضی را بازی می‌کند.

تروریست نروژی درباره ارمنستان و ارمنه

روز ۲۲ جولای (۳۱ تیر) اسلو پایتخت نروژ، از آرام‌ترین کشورهای جهان، شاهد یکی از هولناک‌ترین عملیات تروریستی اروپا بود. مرد جوانی به نام آندرس به‌رینگ برویک با انفجار یک ساختمان دولتی که هفت قربانی گرفت و با به‌رگبار بستن و کشتن بیش از هفتاد کودک در یک اردوی دانش‌آموزی در نزدیکی پایتخت، طراح و مجری این طرح جنایتکارانه بود. انگیزه به‌رینگ در این کار آن طور که از عنوان جزوه ۱۵۰۰ صفحه‌ای‌اش بر می‌آید نجات اروپا از دست

مسائل بحث‌برانگیز در کارنامه شوراى خلیفه‌گری اصفهان

